1480

22
2-21

2010

VI 68/81

684

XVII

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ



'ի պէտս աշակերտաց

Տպագրեալ Ծախիւք

Տեառնտեառն Ստեփաննոսի Յովսէփայ
Յովհաննիսեան Լոփինդեանց։

1854

'Ի ՏՓԽԻՍ

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

'Ի մարդեղութենէն Քրիստոսի ցգալուստ Հոգւոյն սրբոյ։

'Ի պէտս աշակերտաց։

Տպագրեալ ծախիւք

Տեառւլեայնի Սուլէմանիկ Յովսէփայ Յովհաննիսեան Լոփէնդեանց։

1854 — ի Հայոց ՌՅԳ։

'Ի ՏՓԽԻՍ

'Ի Տպարանի Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի Հայոց ընծայելոյ յազնուական Գէորգայ Արծրունւոյ։

Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ չէ գրեալ ՚ի գիրս յայսմիկ։
Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. և զի հաւատայցէք, և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա։

Յովհ. ի. 30, 31։

## ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Кавказскій Цензурный Комитетъ узаконенное число Экземпляровъ. Тифлисъ. 10 Февраля 1854 го года.

*За секретаря Цензурнаго Комитета Цензоръ А. Эбелингъ.*

107842-42

# ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Յառաջընթաց Գործոց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Ամենայն հեթանոսք ընկղմեալ էին յայնպիսի աղետալի խաւար տգիտութեան զԱստուծոյ ճշմարտէ, զի փոխանակ Արարչին երկիր պագանէին արարածոց։ Պաշտելով զսուտ աստուածս, նոքա մատնեալ էին զանձինս իւրեանց նախատական կրից, նաեւ զառակամս կռոց տօնէին հրապարակական հանդիսիւ։

Սակաւք ոմանք 'ի հեթանոսաց ջանացան զօրութեամբ մտաց իւրեանց հետախոյզ լինել Աստուծոյ, բայց ծանեան զտկարութիւն մտաց իւրեանց առ այն, եւ ոչ կարացին ըդդէմ ունել մոլորութեան հասարակաց ։ Ամբարտաւանն Հռովմ առ Օգոստեաւ Կեսարեաւ չարար ինչ մեծ, բաց 'ի հաստատելոյ զարտաքին խաղաղութիւն 'ի մէջ հըպատակաց իւրոց ։ Հռովմայեցիք եւ Յոյնք մարզեալք 'ի հրահանգս քաղաքականութեան՝ չէին ինչ աւելի քան ըզբարբարոս ազինս։ Այս ամենայն անժխտելի ապացոյց էր, թէ աշխարհս ոչ այլ իւիք մարթի փրկել 'ի կորստենէ, բայց եթէ ձեռամբ երկնաւոր փրկչին։

Այն ինչ յանհնարինս նուազեալ էր բարեպաշտութիւն յերկրէ, Բանն յաւիտենական — Որդին Աստուծոյ առաքեցաւ 'ի Հօրէ դնել զհիմն նորոյ եկեղեցւոյ ։ Սուրբ Կոյսն, որ յառաջ քան զյաւիտեանս ընտրեալ էր 'ի բնակարան Աստուածութեան, պատրաստեցաւ լինել օթարան բանին։ բայց որովհետեւ աշխարհս պատեալ էր խաւարաւ անհաւատութեան եւ չարութեան, զօրէն դեռաբաց աչաց կուրի, որ ոչ հեշտեաւ զամենայն ինչ զօրէ նկատել, իսկոյն ոչ կարէր հայել 'ի ճաճանչագեղ նշոյլս այսր Աստուածային լուսոյ, ուստի նախընթաց առաքեցաւ լապտեր — Կարա-

պետն . նա իբրև ՚ղորսեալ , յառաջընթաց եղև Յիսուսի Քրիստոսի - արեգակնային արդարութեան , զի ակար միտք մարդկային ազգի, որք նստէին ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու , զառաջինն ընդելասցեալ արշալուսոյն , և ապա յետ մերժելոյ խաւարի մեղաց և անհաւատութ՛ կարասցեն տեսանել զպայծառ փայլումն Աստուածային լուսոյ — Յիսուսի Քրիստոսի:

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## Մասն Առաջին։

### 1. Ծնունդ սրբոյ կուսին Մարիամու և Ընծայումն նորա 'ի տաճարին։

'Ի քսան և հինգերորդ ամի թագաւորութեան առաջնոյն Հերովդի՝ 'ի Գալիլեայ 'ի Նազարէթ քաղաքի ծնաւ 'ի զարմէ Դաւթի և 'ի տոհմէն Յուդայ ամենասուրբ կոյսն Մարիամ 'ի Յովակիմայ և յԱննայէ յամուլ ծնողաց 'ի ծերութեան հասակի նոցա։ Այլ յետ երից ամաց ընծայեցաւ սուրբ Կոյսն 'ի տաճար Տեառն, ըստ որում ուխտեալ էր մայր նորա։ Քահանայապետն Զաքարիա յայնժամ ընկալեալ օրհնեաց զնա ըստ օրինաց։ Այլ յեօթնամեայ հասակի 'ի սպառ հրաժարեցաւ 'ի տանէ ծնողաց իւրոց և եկաց մնաց 'ի կուսաստանի 'ի մէջ շրջապատ տաճարին։ Իսկ 'ի հասակի իբր տասնևչորս ամաց սուրբ Կոյսն թէպէտ խօսեցեալ եղև առն Յովսէփայ, բայց մնաց միշտ 'ի կուսութեան։

### 2. Զաքարիա և Եղիսաբեթ.

Յաւուրս Հերովդի արքայի Հրէաստանի քահանայ ոմն Զաքարիա անուն 'ի դասակարգէ Աբիայ, և կին նորա 'ի քահանայական ցեղէն 'ի դստերաց Ահարոնի՝ անուն նորա Եղիսաբեթ։ Սոքա երկոքին գոլով արդարք առաջի Աստուծոյ, գնային յամ պատուիրանս և յիրաւունս Տեառն անարատք։ Բայց ոչ գոյր նոցա որդի, քանզի Եղիսաբեթ ամուլ էր, և երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց։ Եւ իբրև եհաս նմա 'ի կարգի աւուրցն՝ ըստ օրինի քա-

հանայութեանն խունկ արկանել առաջի Աստուծոյ՝ եմուտ ’ի տաճար Տեառն, եւ ’ի ժամ խնկոցն երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն ։ Իբրեւ ետես Զաքարիա՝ խռովեցաւ, եւ ահ անկաւ ’ի վերայ նորա։ Ասէ ցնա հրեշտակն, մի՛ երկնչիր Զաքարիա, զի լսելի եղեն աղօթք քո, եւ կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յովհաննէս. եւ լցցի Հոգւով անդստին յորովայնէ մօր իւրոյ, եւ զբազումս յորդւոցն Իսրայէլի դարձուսցէ ’ի Տէր Աստուած իւրեանց ։ Ասէ Զաքարիա ցհրեշտակն՝ Ի՞ւ գիտացից զայդ, զի ես ծեր եմ, եւ կին իմ անցեալ զաւուրբք իւրովք ։ Պատասխանի ետ հրեշտակն. եւ ահա եղիցիս համր եւ ոչ կարասցես խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի։ Եւ իբրեւ լցան աւուրք պաշտամանն՝ գնաց Զաքարիա ’ի տուն իւր, եւ յղացաւ Եղիսաբեթ կին նորա։

3. Աւետիք Սրբոյ Կուսին ։

Յամսեանն վեցերորդի յետ յղութեան Եղիսաբեթի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ’ի Նազարէթ քաղաք առ Կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ եւ ողջոյն տուեալ ասէ . ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ . եւ նա ընդ բանսն խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս իւր՝ թէ ո՛րպիսի ինչ իցէ ողջոյնս այս ։ Ասէ ցնա հրեշտակն . մի՛ երկնչիր Մարիամ, զի գտեր զշնորհս յԱստուծոյ. եւ ահա յղասջիր Հոգւով սրբով, եւ ծնցիս որդի . եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. նա եղիցի մեծ, եւ որդի բարձրելոյ կոչեսցի, եւ թագաւորեսցէ ’ի վերայ տանն Յակովբայ ’ի յաւիտեան, եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի։ Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ եւ նա յղի է ’ի ծերութեան իւրում . եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ է։ Անդէն եւ անդ խոնարհեալ Կուսին յանձառելի կամս Աստուծոյ՝ ընկալաւ զողջոյնն ասելով . ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում .

և առժամայն յղացաւ բանն Աստուած յարգանդի կու-
սին՝ մարմին առեալ յարենէ նորա զօրութեամբ սուրբ
Հոգւոյն միացաւ ընդ մարմնոյն. և ապա գնաց 'ի նմանէ
հրեշտակն։

### 4. Սրբուհի Կոյսն գնայ յայցելութիւն Եղիսաբեթի։

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ չոգաւ փու-
թապէս 'ի քաղաքն Յուդայ և եմուտ 'ի տուն Զաքարիայ,
և ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ իբրև լուաւ զողջոյնն Մա-
րիամու Եղիսաբեթ՝ խաղաց մանուկն յորովայնի նորա.
լցեալ Եղիսաբեթի Հոգւով սրբով՝ 'ի ձայն բարձր աղաղա-
կեաց եւ ասէ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պը-
տուղ որովայնի քո. և ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ Մայր
Տեառն իմոյ առ իս։ Եկաց Մարիամ առ Եղիսաբեթի իբրև
ամիսս երիս, և ապա դարձաւ 'ի տուն իւր։

### 5. Յովսէփ եւ կոյսն Մարիամ։

Յովսէփ իբրև ետես զկոյսն յղի, խռովեցաւ ընդ միտս
իւր. բայց ինքն արդար էր, և ոչ կամեցաւ առակել զնա.
խորհեցաւ լռելեայն արձակել զնա։ Եւ մինչդեռ նա զայս
ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երևեցաւ
նմա և ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ
քեզ զՄարիամ կին քո, որ յղացեալ է Հոգւով սրբով.
ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փըր-
կեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց.

### 6. Ծնունդ Յովհաննու Մկրտչի։

Իբրև լցան ժամանակք ծնանելոյ Եղիսաբեթի, ծնաւ զոր-
դի. լուան՝ որ շուրջ զնովաւ էին՝ և ազգատոհմ նորա, և խըն-
դային միաբան օրհնելով զԱստուած, զի արար Տէր զո-

ողորմութիւն ընդ նմա. եւ յաւուրն ութերորդի իբրեւ եկին թլփատել զմանուկն ըստ օրինացն Մովսէսի, կամէին կոչել զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա։ Նա նշանացի իմն անխօսկութեամբ հարցանէին ցհայրն. եւ նա խնդրեաց տախտակ, եւ գրեաց. Յովհաննէս է անուն դորա։ Իսկ առ ժամայն բացաւ բերան նորա եւ լեզու, եւ սկսաւ խօսել եւ օրհնել զԱստուած։ Եւ այս ամենայն որք լսէին՝ զարմանային եւ ասէին, զի՞նչ լինիցի մանուկս այս. եւ մանուկն Յովհաննէս աճէր եւ զօրանայր հոգւով սրբով, եւ ապա առանձնացեալ յանապատ՝ եկաց անդ մինչեւ առաքեցաւ ՚ի Տեառնէ քարոզել ժողովրդեան զապաշխարութիւն մկրտութեան եւ զմերձել արքայութեան երկնից, ըստ Քրիստոսի, պատրաստելով զճանապարհ Տեառն Մեսիայի։

7. Ծնունդ Քրիստոսի։

Իբրեւ մերձեցաւ ժամանակ ծննդեան Մեսիային, որ ըստ գուշակութեան Մարգարէից՝ հանդերձեալ էր լինել ՚ի Բեթղեհէմ. ահա ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել, (գրել զանուանս ամենեցուն՝ որք էին ընդ իշխանութեամբ նորա)։ Վասն այսորիկ ել Յովսէփ ՚ի Նազարեթէ հանդերձ Մարեմաւ գնալ ՚ի Բեթղեհէմ ըստ որում Բեթղեհէմացի վասն լինելոյ նորա ՚ի տանէ եւ յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիրն։ Իբրեւ հասին անդր, տեսին, զի լի էր քաղաքն խուռն բազմութեամբ ՚ի պատճառս աշխարհագրին՝ մինչեւ չլինել նոցա տեղի պատշաճաւոր, ստիպեցան յայնմ գիշերի բնակել յայրի իջեւանին, ուր էր մսուր անասնոց։ Ընդ կամեցաւ ծնանել փրկիչն տիեզերաց, ակնկալութիւնն հեթանոսաց եւ ամենայն մարգարէից։ Արդ ծնաւ խոստացեալ Մեսիայն յամի աշխ. 4000 կամ ըստ ոմանց 4033. ՚ի

քառասներորդ ամի կայսերութեան Օգոստեայ, յերեսուն և եօթներորդ ամի թագաւորութեան Հերովդի, և յերկրորդ ամի թագաւորութեան Աբգարու Հայոց արքայի։

### 8. Երկրպագութիւն Հովուաց։

Հովիւք՝ որք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք 'ի դաշտս Բեթղեհեմի 'ի պահպանութիւն հօտից իւրեանց, տեսին զհրեշտակ Տեառն, և երկեան երկիւղ մեծ. յայնժամ քաջալերեաց զնոսա հրեշտակն՝ ասէ. մի՛ երկնչիք, զի աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեան, զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի. և այս լիցի ձեզ նշանակ, գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր։ Եւ յանկարծակի երևեցաւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնէին զԱստուած և ասէին ,, փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն,,։ Եւ իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ընթացան հովիւքն 'ի Բեթղեհէմ, և գտին զՄարիամ և զՅովսէփ և զմանուկն եդեալ 'ի մսուր. և երկրպագեալ՝ դարձան և փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի՛ զոր լուան և տեսին։

### 9. Թլփատութիւն և Անուանակոչութիւն Տեառն։

Զկնի անցանելոյ աւուրց ութից, տեսաւ խոնարհութիւն փրկչին և ընդ անցանել նորա ընդ Մովսիսական օրէնսն թլփատութեան. զի թլփատեցին զնա, և կոչեցին զանուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն յաւուր աւետմանն։

## 10. Երեք մոգք գան յարեւելից յերկրպագութիւն Յիսուսի.

Եւ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի ահա մոգք (աստեղագէտք) յարևելից եկին յԵրուսաղէմ, և հարցանէին՝ թէ ո՞ւր է, որ ծնաւ արքայն Հրէից, զորոյ տեսաք զաստղն յարևելս, և եկաք երկիրպագանել նմա։ Եւ ժողովեալ նորա զամենայն քահանայապետսն և զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր 'ի նոցանէ, թէ ո՞ւր արդեօք ծնանելոց է Քրիստոսն. Եւ նոքա ասեն ցնա 'ի Բեթղեհեմ Հրէաստանի, ըստ մարգարէութեանն Եսայեայ։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն և քննեալ ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ. և արձակեալ զնոսա՝ ասէ նենգութեամբ. գնացէք, ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ. զի և ես եկեալ երկիրպագից նմա. Իբրև մեկնեցան գնացին նոքա անտի, ահա հրաշալի աստղն անդրէն ծագեալ առաջնորդեաց նոցա. մինչև եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն։ Իսկ նոքա իբրև տեսին զաստղն՝ խնդացին յոյժ. և մտեալ 'ի ներքս 'ի տուն՝ տեսին զմանուկն Յիսուս հանդերձ Մարիամու մարբն իւրով, և անկեալ երկիրպագանէին նմա, և բացեալ զգանձս մատուցին նմա Ոսկի, Կնդրուկ և Զմուռս։ Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

## 11. Կոտորումն մանկանց Բեթղեհեմի։

Իբրև ետես Հերովդէս եթէ խաբեցաւ 'ի մոգուց, բարկացաւ յոյժ, և երկուցեալ թէ նորածին մանուկն յաւուր միում առցէ յիւրմէ զթագաւորութիւնն, անդէն հրաման ետ կոտորել զամենայն մանկունս՝ որք էին 'ի Բեթղեհեմ և յամենայն սահմանս նորա յերկեմենից և 'ի խոնարհ. որպէս զի սպանցէ և զՅիսուս ընդ նոսա։ Սակայն

Յովսէփ ՚ի տեսլեան իմացեալ ՚ի հրեշտակէն չար կամս Հերովդի՝ առ զմանուկն եւ զմայր իւր եւ փախեաւ յԵգիպտոս, եւ անդ մնացին մինչեւ ցմախճան Հերովդի։ Յետ այնորիկ անդրէն երեւեալ հրեշտակին՝ ասէ ցՅովսէփ, առէ՛ առ զմանուկդ եւ զմայր նորա, եւ գնա՛ ՚ի Հրէաստան, զի մեռան՝ որք խնդրէին զանձն մանկանդ։ Եւ նա յարուցեալ եկն յերկիրն Իսրայէլի. Բայց իբրեւ լուաւ, եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ հօր իւրոյ Հերովդի, երկեաւ գնալ ՚ի քաղաք իւր, եւ հրաման առեալ ՚ի տեսլեան՝ գնաց ՚ի կողմանս Գալիլեայ ՚ի քաղաքն Նազարեթ, զի լցցի բան մարգարէիցն թէ ,, Նազովրեցի կոչեսցի ,, ։

12. Քառասնօրեայ ընծայումն Յիսուսի ՚ի տաճարն։

Իբրեւ եղեւ Յիսուս քառասնօրեայ, ածին զնա ծնողքն յԵրուսաղէմ ըստ օրինացն Մովսէսի յանդիման առնել եւ ընծայել Տեառն, ունելով ընդ իւրեանս զերկուս ձագս աղաւնեաց ՚ի պատարագ։ Եւ էր յԵրուսաղէմ ծերունի մի Սիմէոն անուն, այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ. որոյ հրաման առեալ էր ՚ի տեսլեան չտեսանել զմահ՝ մինչեւ տեսցէ զօծեալն զՔրիստոս։ Արդ սա իբրեւ ետես զՅիսուս ՚ի տաճարին, լցեալ Հոգւով սրբով ծանեաւ թէ նա ինքն է Փրկիչն Տէր, հեթանոսաց ակնկալութիւն, եւ փառք Իսրայէլի. վասն որոյ առեալ զնա ՚ի գիրկս իւր, օրհնեաց զԱստուած ասելով. ,, Արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեան։ Ապա դարձաւ առ մայր Կոյսն եւ ասէ, Ահա Սա կայ ՚ի գլորումն եւ ՚ի կանգնումն բազմաց ՚ի մէջ Իսրայէլի եւ ՚ի նշան հակառակութեան. յորմէ եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր։ Յայնժամ Աննա Մարգարէուհի այրի իբրեւ ութսուն եւ չորից ամաց. որ ոչ մեկնէր ՚ի տաճարէն,

յարուցեալ գոհանայր զՏեառնէ, և խօսէր զնմանէ ընդ ամենեսին։ Եւ յետ կատարելոյ զամենայն ըստ օրինաց Տեառն՝ դարձան 'ի քաղաքն իւրեանց Նազարէթ։

### 13. Երկոտասանամեայ Յիսուս 'ի տաճարի։

Սուրբ Կոյսն Մարիամ և Յովսէփ ելանէին ամի ամի յԵրուսաղէմ 'ի տօնի Զատկին, տարեալ ընդ իւրեանս և զՅիսուս. և 'ի տարւոջն՝ յորում երկոտասան ամաց էր Յիսուս՝ իբրև ելին յԵրուսաղէմ ըստ սովորութեանն, 'ի դառնալն՝ մնաց մանուկն Յիսուս յԵրուսաղէմ. զոր ոչ գիտելով ծնողացն՝ կարծէին թէ ընդ ուղեկիցսն իցէ։ Եւ իբրև եկին աւուր միոյ ճանապարհ և ոչ գտին զնա, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա։ Եւ յետ երից աւուրց գտին զնա 'ի տաճարին, զի նստեալ ընդ օրէնսուսոյց վարդապետս լսէր 'ի նոցանէ և հարցանէր զնոսա։ Զարմանային ամենեքեան ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա։ Յայնժամ մայր նորա սքանչացեալ ասէ ցնա. որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, զի այսչափ տառապեցաք խնդրել զքեզ. ետ պատասխանի Յիսուս, զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք, եթէ 'ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել. Ապա յարուցեալ գնաց ընդ նոսա 'ի Նազարէթ, և էր նոցա հնազանդ։

### 14. Քարոզութիւն Յովհաննու Մկրտչի։

'Ի հնգետասաներորդի ամի փրկչին՝ մեռաւ Օգոստոս կայսր 'ի հասակի եօթանասուն և վեց ամաց, թագաւորեալ ամս յիսուն և եօթն. 'ի հնգետասաներորդ ամի թագաւորութեան սորա, և 'ի քսան և իններորդ ամի փրկչին՝ եղև բան Տեառն առ Յովհաննէս որդի Զաքարիայ յանապատի անդ, ուր մնեալ կայր նա 'ի հրեշտակական վարս առաքինութեան 'ի մանկութենէ իւրմէ։ Եւ

եւ նա յանապատէ բանիւ Տեառն և եկն 'ի կողմանս Յորդանանու քարոզել զմկրտութիւն ապաշխարութեան 'ի թողութիւն մեղաց՝ ասելով. ,,Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից,,. և ինքն էր զգեցեալ զգեստ 'ի բըտեւոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստանեայք, և խոստովան լեալ զմեղս իւրեանց՝ մկրտէին 'ի Յորդանան գետ: Մինչ ակն ունէր ժողովուրդն և խորհէին ամենեքեան վասն Յովհաննու, եթէ նա իցէ Քրիստոսն. ետ պատասխանի Յովհաննէս և ասէ: Ես մկրտեմ զձեզ ջրով. բայց կայ 'ի միջի ձերում, զոր դուք ոչ գիտէք. նա հզօրագոյն է քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս, նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով:

## 15. Մկրտութիւն Յիսուսի:

Արդ իբրև խուռնըրնթաց դիմէին ժողովուրդքն յամենայն կողմանց առ Յովհաննէս մկրտիլ 'ի նմանէ, եկն և Յիսուս ընդ նոսա 'ի Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս մկրտիլ 'ի նմանէ 'ի սկիզբն երեսներորդ ամի ծնընդեան իւրոյ: Զայն տեսեալ Յովհաննու՝ հրաժարէր և ասէր. ինձ պիտոյ է 'ի քէն մկրտիլ, և դու առ իս գաս: Ասէ ցնա Յիսուս. թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և ապա թոյլ ետ նմա: Իբրև մկրտեցաւ Յիսուս՝ ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և էջ Հոգին Աստուծոյ իբրև զաղաւնի և հանգեաւ 'ի վերայ նորա. և ահա հայրական ձայն յերկնից, որ ասէր. ,,Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ: Եւ այնուհետև յայտնաբարբառ քարոզէր Յովհաննէս ամենեցուն՝ որ գային 'ի մկրտութիւն վասն Յիսուսի, թէ սա է ճշմարիտ Մեսիայն փրկիչ աշխարհի:

## 16. Փորձն Յիսուսի 'ի սատանայէ .

Յետ այնորիկ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հոգւոյն՝ փորձել 'ի սատանայէ, և պահեալ անդ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա, եթէ որդի ես Աստուծոյ, ասա՛, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին . Իսկ Յիսուս պատասխանեաց զնա ասելով . գրեալ է՝ ,, ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամ բանիւ Աստուծոյ,, . Յայնժամ առեալ տանի զնա սատանայ 'ի քաղաքն սուրբ և կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ . եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի 'ի վայր, այլ անդէն կարկի Աստուածային բանիւ, թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո : Ապա և ևս փարձիչն տանի զնա 'ի լեառն մի բարձր՝ ցուցանելով նմա 'ի վայրկեան ժամանակի զամենայն թագաւորութիւնս աշխի, և ասէ . զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ . Յայնժամ սաստեաց նմա Յիսուս և ասէ, երթ յետս իմ սատանայ . զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես : Ապա եթող զնա սատանայ և հրեշտակք մատեան և պաշտէին զնա .

## 17 . Խնդիր 'ի մէջ Հրէից վասն գալստեան Մեսիայի :

Յայնմ ժամանակի եղև խնդիր 'ի մէջ Հրէից յաղագս գալստեան Մեսիայի . քանզի ժամանակն նշանակեալ 'ի մարգարէից հասեալ էր, նմին իրի գլխաւորք Հրէից առաքեցին առ Յովհաննէս զքահանայս և զղևտացիս՝ հարցանել, թէ դու ո՞վ ես: Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ՝ թէ ես չեմ Քրիստոսն, այլ Կարապետ առաքեալ եմ առաջի նորա . և ըստ Եսայեայ՝ ես ձայն բարբառոյ յանապատի . պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա .

### 18. Վկայութիւն Յովհաննու զՅիսուսէ:

Իսկ 'ի վաղիւ անդր ետես Յովհաննէս զՅիսուս, յայտնաբարբառ քարոզեաց ամենեցուն եւ ասէ. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ, որ եկն բառնալ զմեղս աշխարհի. եւ ես ոչ գիտէի զնա, այլ իբրեւ տեսի զերկինս բացեալ եւ զՀոգին Աստուծոյ իջեալ 'ի վերայ նորա, ծանեայ ճշմարտութեամբ եւ վկայեցի՝ թէ Սա է Որդին Աստուծոյ, որ տայ զանձն իւր 'ի պատարագ առ 'ի բառնալ զմեղս ամենեցուն:

### 19. Կոչումն Անդրէի, Պետրոսի, Փիլիպպոսի եւ Նաթանայէլի:

Իսկ 'ի միւսում աւուր Յովհաննէս ընդ երկուց աշակերտաց իւրոց տեսեալ զՅիսուս, զի գնայր. եցոյց զնա մատամբ եւ աղաղակեաց ասելով. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ: Որ իբրեւ լուան աշակերտքն, թողին զՅովհաննէս եւ գնացին զհետ Յիսուսի: Մի յերկուց անտի էր Անդրէաս եղբայր Սիմոնի վիմի: Սա գտանէ նախ զեղբայր իւր զՍիմոն. եւ ծանուցեալ նմա զգալուստ Մեսիային՝ ածէ զնա առ Յիսուս: Տեսեալ զնա Յիսուսի՝ ասէ. Դու կոչեսցիս այսուհետեւ Կեփաս, որ թարգմանի Պետրոս, այս է վէմ: 'Ի վաղիւ անդր իբրեւ ելանէր 'ի Գալիլեայ՝ գտանէ զՓիլիպպոս եւ կոչէ զնա: Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ եւ յայտնեալ նմա զգալուստ Փրկչին՝ ածէ զնա առ նա: Իբրեւ ետես զնա Յիսուս՝ վկայեաց ասելով. Ահա արդարեւ Իսրայելացի, յորում նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս. պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. մինչեւ էր Փիլիպպոսի կոչեալ զքեզ՝ տեսի զքեզ 'ի ներքոյ թզենւոյն: Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռաբբի, դու ես Որդի Աստուծոյ, դու ես թագաւոր Իսրայէլի:

### 20. Սկիզբն նշանաց Յիսուսի ՚ի Կանա Գալիլեացւոց։

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Կանա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի։ Կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ՚ի հարսանիսն։ Եւ ՚ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. գինի ոչ ունին։ Եւ ասէ ցնա Յիսուս. զի՞ կայ իմ և քո՛ կին դու, չև՛ է հասեալ ժամանակ իմ։ Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք։ Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեան Հրէից. տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս։ Ասէ ցնոսա Յիսուս. լցէք զթակոյկսդ ջրով, և լցին զնոսա մինչև ՚ի վեր։ Եւ ասէ ցնոսա. արդ՝ առէք և բերէք տաճարապետին և նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն. ասէ ցփեսայն. ամենայն մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. և յորժամ արբենան, յայնժամ զյոռին. դու պահեցեր զանոյշ գինին մինչև ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց Յիսուս ՚ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր։

### 21. Արտաքսելն Յիսուսի ՚ի տաճարէն զվաճառականս։

Յետ այսորիկ գնաց ՚ի Կափառնայում ինքն և մայր իւր և աշակերտքն իւր, և անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս։ Եւ իբրև մերձեցաւ զատիկն Հրէից, չոգաւ յԵրուսաղէմ, և տեսեալ ՚ի տաճարին՝ զի վաճառէին և գնէին զարջառս և զոչխարս, և զլումայափոխսն ՚ի տալ և յառնուլ զդրամս. արար խարազան չուանեայ, և եհան զամենեսին ՚ի տաճարէն՝ ասելով. առէք զայդ աստի, և մի՛ առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի։ Զայն տեսեալ աշակերտացն՝ յիշեցին զկանխասաց բանն, թէ՝ ,,Նախանձ տան քո կերիցէ զիս,,։ Յայնժամ հարցին ցնա Հրէայքն և ա-

սեն։ Զի՞նչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես։ Պատասխանի ետ Յիսուս. քակեցէք զտաճարդ զայդ և զերիս աւուրս կանգնեցից զդա։ Ասեն ցնա Հրեայքն. զքառասուն և զվեց ամ շինեցաւ տաճարս այս, և դու զերիս աւուրս կանգնեսցես զդա։ Բայց նոքա ոչ իմացան, եթէ նա ասէր զայն քակելոյ մահուամբ զտաճար մարմնոյ իւրոյ, և կանգնելոյ երեքօրեայ յարութեամբ։ Իսկ յորժամ յարեաւ ՚ի մեռելոց՝ յիշեցին աշակերտքն նորա թէ այս է՝ զոր ասացն Յիսուս. և հաւատացին գրոյն և բանին։ Ընդ ՚ի տօնի զատկին տեսեալ զքանչելիս նորա՝ բազումք հաւատացին յանուն նորա։

## 22. Բանք Յիսուսի առ Նիկոդեմոս վասն վերստին ծննդեան։

Եւ էր այր ոմն ՚ի փարիսեցւոց անուն՝ Նիկոդիմոս անուն իշխան Հրէից, և մի ՚ի բազմութենէ անտի եղելոց ՚ի տօնի զատկին, որք տեսին զգործսն Յիսուսի։ Սա եկն առ Յիսուս գիշերի, և ասէ ցնա. Ռաբբի՝ գիտեմք՝ եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ, զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել, զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս. ամէն ամէն ասեմ քեզ. եթէ ոչ ոք ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ.

## 23. Բանապարէին Յովհաննու.

Զկնի տօնին եկեալ Յիսուս յԵրուսաղեմէ շրջէր ՚ի կողմանս Յորդանանու, և աշակերտքն ընդ նմա, և անդ քարոզէր և մկրտէր։ Եւ եղև խնդիր յաշակերտաց Յովհաննու ընդ Հրէից, զի ժողովուրդն յաճախէր առ Յիսուս վասն մկրտութեան, ասեն ցՅովհաննէս. Ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու՝ որում դուն վկայեցեր. ահաւասիկ նա մկրտէ, և ամենեքին երթան առ նա։ Պատասխանի

ես Յովհաննէս. ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ՝, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից 'ի վերուստ. նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ։ Հայր սիրէ զորդի և զամ ինչ ետ 'ի ձեռս նորա։ Որ հաւատայ յորդի, ընդունի ըզ-կեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ 'ի վերայ նորա։ Յովհաննէս այսպիսի քաջք քարոզութեամբ խրա-տէր զամենեսեան աներկբայ հաւատալ 'ի Ճշմարիտ Մե-սիայն Յիսուս, և անդադիւս վարուք հետևել հետոյ նո-րա. բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն Հերովդիեայ կնոջ եղբօր իւրոյ Փիլիպպոսի, և վասն ամենայն չարեացն զոր գործեաց նա, յաւել և զայն ևս 'ի վերայ ամենայնի. և եդ 'ի բանտի զՅովհաննէս։

## 24. Կին Սամարացի։

Տեսեալ Յիսուսի զնախանձ փարիսեցւոց, եթող զՀրէ-աստան և չոգաւ միւսանգամ 'ի Գալիլեա. և անցեալ ը՟ Սամարիա գայ մօտ 'ի Սիւքար քաղաք. և վաստակեալ 'ի ճանապարհի՝ նստի 'ի վերայ աղբեր, որ էր ջրհոր Յակով-բայ մերձ 'ի գեօղն, զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յով-սեփայ։ Գայ կին մի 'ի Սամարեայ հանել ջուր։ Յիսուս խնդրէ 'ի նմանէ ջուր. տալ ցնա կինն. Դու՝ որ Հրեայդ ես, զիարդ յինէն ըմպել խնդրես, զի Հրեայքըն-նու ոչ խառնակին ընդ Սամարացիս։ Յայնժամ Յիսուս ակնարկս բանիւք յայտնեաց նմա զինքն, թէ Մեսիայն է։ Իսկ կինն ընդ լսելն զայն՝ թողեալ զսափորն՝ չոգաւ 'ի քա-ղաք անդր, և քարոզ կարդայր ամենեցուն ասելով. եկայք տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ գործեալ է իմ. մի թէ նա՞ իցէ Քրիստոսն։ Բազումք ելեալ 'ի քա-ղաքէն ընդ կնոջն գային առ նա, և լուեալ զճշմարտալից բանս նորա հաւատացին 'ի նա. և ապա աղաչեցին զնա և մնացին 'ի քաղաքն, և պահեցին զաւուրս երկուս. յորս

հաւատացեալ ՚ի նա բազմաց՝ առէին ցկինն . ոչ աստուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք ՚ի դմանէ . և գիտեմք եթէ դա է Ճշմարտիւ փրկիչ աշխի:

## 25. Բժշկէ Յիսուս զորդի Թագաւորազնին:

Յիսուս դարձեալ եկն ՚ի Կանա Գալիլեացւոց, ուր արար զջուրն գինի . և անդ էր Թագաւորազն մի, որոյ որդին հիւանդ կայր ՚ի Կափառնաում: Սա լուեալ զգանչելն փրկչին՝ եկն առ նա և աղաչէր երթալ և բժշկել զորդի նորա, քանզի մերձ էր ՚ի մեռանել: Ասէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո կենդանի է: Նա հաւատաց Թագաւորազն բանին Յիսուսի և մեկնեցաւ անտի: Մինչդեռ իջանէր ՚ի քաղաք իւր, ընդ առաջ եղեն նմա ծառայք նորա և աւետիս տուեալ ասեն, թէ մանուկն նորա կենդանի է: Իսկ նա հարցանէր ցնոսա, թէ յորում ժամու ապաքինեցաւ: Նոքա ասեն. երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն: Գիտաց հայրն նորա, թէ յայնմ ժամու բժշկեցաւ որդին, յորում ասաց Յիսուս՝ եթէ որդին քո կենդանի է . և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր: Զայս երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա:

## 26. Քարոզութիւն Յիսուսի:

՚Ի սկիզբն երեսներորդ երկրորդ ամին սկսաւ համարձակ քարոզել ՚ի ժողովրդանոցս Հրէից, և ձգել զնաւն բազմութիւն հաւատացելոց զնինիւր՝ փառաւորեալ յամենեցունց: Նա զի գլխաւոր նպատակ կենարար վարդապետութեան նորա էր ուսուցանել զապաշխարութիւն կենաց, առանց որոյ չէ՛ք փրկութիւն մեղուցելոց. յորդորել ՚ի պահպանութիւն օրինաց Տեառն, արհամարհել զանցաւոր մեծութիւն աշխիս: Պատուիրէր սիրել զամենեսին սուրբ սրտիւ, եւս և զթշնամիս . ներել միմեանց և ողորմել ա-

քաւոյ։ Հնազանդել Տերանց իբրև Աստուծոյ, փախչել ՚ի կեղծաւորութենէ փարիսեցւոց՝ որք ՚ի ցոյց մարդկան սուրբ երևէին, այլ ՚ի ներքս լի էին ապականութեամբ։ Ուսուցանէր ամենեցուն յամենայն ժամ կալ յաղօթս և դիմել առ Աստուած յամենայն նեղութիւնս, և ՚ի վեր քան զամենայն սիրել զԱստուած և երկնչել ՚ի նմանէ. Եւ եկն Յիսուս ՚ի Նազարէթ՝ ուր սնեալն էր, և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շաբաթու ՚ի ժողովուրդն։ Ետուն նմա զգիրս Եսայեայ մարգարէի, և յարեաւ ընթեռնուլ, և իբրև եբաց զգիրսն, եգիտ զայն տեղին՝ յորում գրեալն էր։ «Հոգի Տեառն ՚ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց՝ առաքեաց զիս։» Եւ խփեալ զգիրն ետ ցպաշտօնեայն՝ և նստաւ. և ամենեցուն՝ որ ՚ի ժողովրդեանն էին աչք՝ ՚ի նա հայէին։

Եւ սկսաւ ասել ցնոսա, այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։ Յաւել ասել և զայս, ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս, բ՛ժիշկ՝ բժշկեա զանձն քո, որչափ լուաք, զոր արարեր ՚ի Կափառնաում, արա և աստ ՚ի քում գաւառի։ Ամէն ասեմ ձեզ, չէ մարգարէ ընդունելի ՚ի գաւառի իւրում. Եւ ՚ի յանդիմանելն նորա զկուրութիւն մտաց նոցա, լցան ամենեքին բարկութեամբ. և յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին յարտևան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավէժ առնել զնա։ Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր։ Եւ իջեալ ՚ի Կափառնաում՝ ուսուցանէր զժողովուրդս ՚ի շաբաթս։ Զարմանային ամենեքեան ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա։

27. Առնէն կոչումն Պետրոսի և Անդրէի եղբօր նորա, ընդ նոսին և որդւոցն Զեբեդեայ։

Մինչդեռ կայր Յիսուս առ ծովակին Գեննեսարէ-թայ՝ ետես զերկուս ձկնորսս, զՍիմոն Պետրոս և զԱնդ-

րէաս եղբայր նորա, և կոչեաց զնոսա միաբանգամ ասելով, եկայք զկնի իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան։ Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես զՅակովբոս Զեբեդեայ և զՅովհաննէս եղբայր նորա ՚ի նաւի՝ և կոչեաց զնոսա, իսկ նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայրն իւրեանց՝ գնացին զհետ նորա։ Եւ ապա ել ՚ի նաւն Սիմոնի և ուսուցանէր ՚ի նաւէ անտի զժողովուրդն. և իբրև լռեաց ՚ի խօսիցն, հրամայեաց արկանել զուռկանսն յորս. իբրև արկին, փակեցին ՚ի ներքս զբազմութիւն ձկանց յոյժ, մինչև լցան երկոքին նաւքն։ Յայնժամ Պետրոս առ մեծի երկիւղին անկաւ առ ծունկսն Յիսուսի և ասէ, ՚ի բաց գնա յինէն՝ Տէր, զի այր մեղաւոր եմ ես։ Նոյնպէս ահ մեծ պատեաց զՅակովբոս և զՅովհաննէս որսակիցսն Սիմոնի, այլ քաջալերեալ զնոսա ասէ, մի՛ երկնչիր Սիմոն, յայսմհետէ զմարդիկ որսասցես ՚ի կեանս։

## 28. Հրաշագործութիւնք Յիսուսի։

Եմուտ Յիսուս աշակերտօքն հանդերձ ՚ի Կափառնաում, զի անդ դիմեցին ժողովուրդք յամենայն կողմանց։ Եւ մտեալ ՚ի տուն Պետրոսի՝ ետես, զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յառն եկաց և պաշտէր զնոսա։

Գնաց Յիսուս դարձեալ քարոզել ՚ի ժողովրդանոցն. և տեսեալ զդիւահար մի, հրամայեաց դիւին ելանել ՚ի նմանէ. իսկ դևն աղաղակեաց՝ ասելով, թո՛յլ տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ։ Սաստեաց ՚ի նա Յիսուս, և ել դևն ՚ի նմանէ. և զարմացան ամենեքեան։ Եւ յայնժամ բժշկեաց Յիսուս զբորոտս և զբազում հիւանդս ՚ի պէսպէս ախտից, և զդիւահարս՝ որ ժողովեալ կային առ դուրսն։

Յետ այսորիկ դարձաւ Յիսուս առ ափն ծովու, և իբրև կամեցաւ անցանել յայնկոյս ծովակին, եմուտ ՚ի նաւ

ընդ աշակերտաց իւրոց, և ննջէր 'ի խելս նաւին, և յարեաւ մրրիկ հողմոյ 'ի ծովակին և ուռնոյր, մինչև մերձ էր ընկղմել նոցա: Մատուցեալ աշակերտքն առ Յիսուս, զարթուցին զնա և ասեն, վարդապետ՝ կորնչիմք ահաւասիկ: Եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջրոյն. և հանդարտեցաւ ջուրն: Այն ինչ ել Յիսուս 'ի ցամաք յաշխարհն Գերգեսացւոց, պատահեցան նմա երկու չարաչար դիւահարք, աղաղակեցին և ասէին. զի՞ կայ մեր և քո, Յիսուս, որդի Աստուծոյ բարձրելոյ՝ աղաչեմք զքեզ, մի՛ տանջեր զմեզ: Եւ Յիսուս հրամանաւ տայր լեգէոնի դիւացն ելանել 'ի նոցանէ: Իսկ դևքն աղաչէին զնա՝ չառաքել զնոսա յանդունդս, այլ յերամակն խոզից արօտականաց՝ որ 'ի լերին անդ: Եւ ելեալ դևքն մտին 'ի խոզեանն, և նոյնժամայն դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծով և հեղձան 'ի ջուրսն: Եւ յետ այնորիկ բժշկեաց Յիսուս զբազում հիւանդս և զլուսնոտս, և զկինն տեռատես, մերձենալով և եթ կնոջն 'ի քղանցս հանդերձի նորա:

Յարոյց ապա և զմեռեալ դուստր իշխանին Յայրոսի, և զդիւահար համրն ազատեաց 'ի դիւէն:

Եւ երբև մերձեցաւ տօն զատկին Հրէից, ել Յիսուս յԵրուսաղէմ. և 'ի Պրոբատիկէ աւազանին բժշկեաց զանդամալոյծ մի երեսունևութամեայ, որ անկեալ դնիւր մերձ յաւազանն, յորում լուանային զոչխարս՝ յառաջ քան զմատուցանելն 'ի տաճար անդր: Եւ հրեշտակ Տեառն իջանէր երբեմն յաւազանն՝ և յուզէր զջուրսն, և որ ոք յախտացելոց նախ իջանէր յաւազանն, անդէն բժշկիւր, ոչ ունելով նշան ինչ հիւանդութեան: Իսկ անդամալոյծն այն չունէր զոք՝ զի արկցէ զինքն յաւազանն. նմին իրի այնչափ ամս մնացեալ էր անդ 'ի հիւանդութեան:

### 29. Ընտրութիւն երկոտասան Առաքելոց:

Եւ եղեւ ընդ աւուրս ընդ այնոսիկ ել Յիսուս 'ի լեառն կալ յաղօթս: Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս, զորս և Առաքեալս անուանեաց: Եւ անուանք նոցա էին, Սիմոն Պետրոս և Անդրէաս եղբայր նորա, Յակոբոս Զեբեթեայ և Յովհաննէս եղբայր նորա, Փիլիպպոս և Բարթուղիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ, և Ղեբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս, Սիմոն Կանանացի, և Յուդա Իսկարիովտացի, որ եղեւ մատնիչ:

### 30. Վարդապետութիւն Յիսուսի զինն երանութեանց.

Եւ իջեալ աշակերտօքն հանդերձ 'ի տեղի մի տափարակ, ուր էր բազմութիւն յոյժ ժողովրդեան, որք եկեալ էին լսել 'ի նմանէ և բժշկիլ 'ի հիւանդութեանց իւրեանց: Եւ ամբարձեալ Յիսուսի զաչսն յաշակերտսն իւր՝ ուսուցանէր զնոսա և ասէր: Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւնն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ՝ նախատեսցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն, որք յառաջ քան զձեզ էին.

### 31. Բժշկութիւն ծառայի Հարիւրապետին։

Եւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն բանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառնաում։ Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանիլ։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ եւ ապրեցուսցէ զծառայն նորա։ Յիսուս գնայր ընդ նոսա, եւ իբրեւ ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա Հարիւրապետն բարեկամս եւ ասէ. Տէր մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես. այլ ասա՛ բանիւ՝ եւ բժշկեսցի մանուկն իմ։ Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ եւ ասէ. ամէն ասեմ ձեզ, թէ եւ ոչ յԻսրայէլ այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն, եւ գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։

### 32. Յարուցանէ Յիսուս զմիամօր մանուկն։

'Ի միւսում աւուր յարոյց զմանուկն միամօր մերձ 'ի դուռն Նային քաղաքի, զոր բարձեալ տանէին 'ի թաղել. յորմէ ահ կալաւ զամենեսին, եւ փառաւոր առնէին զԱստուած՝ եւ ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի մէջ մերում, եւ թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։

### 33. Օծումն Մարիամու Մագդաղենացւոյ։

Յետ այնորիկ աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոց, զի կերիցէ հաց ընդ նմա. եւ մտեալ 'ի տուն փարիսեցւոյն. բազմեցաւ։ Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր, իբրեւ լուաւ զՅիսուսէ, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի՝ եւ անկեալ յոտս նորա լայր, եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, եւ հերով գլխոյ իւրոյ սրբէր, եւ համբուրեալ զոտս նորա՝

օծանէր իւղովն։ Տեսեալ Յիսուսի զսէրն կնոջն՝ ասէ ցնա, Թողեալ լիցին քեզ մեղք քո։

### 34. Առակ սերմանողին։

Եւ եղեւ յետ այնորիկ ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւետարանէր զարքայութիւնն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ նմա։ Եւ 'ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց եկելոց առ նա՝ ասէ առակաւ։ Ել սերմանացան սերմանել զսերմանս իւր. և 'ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղեւ կոխան, և թռչունք երկնից կերան զնա. Եւ այլն անկաւ յապառաժի, և ընդ բուսանելն՝ չորացաւ, առ 'ի չգոյէ հիւթոյ։ Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ը̄ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ, և բուսեալ արար պտուղ հարիւրապատիկ։ Հարցանէին ցնա աշակերտքն և ասէին, զի՞նչ իցէ առակն։ Ասէ Յիսուս. առակս այս է. սերմն՝ բանն Աստուծոյ է։ Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են, որք լսեն. և ապա գայ սատանայ և հանէ զբանն 'ի սրտից նոցա. զի մի՛ հաւատասցեն և ապրեսցին։ Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն. և արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, և 'ի ժամանակի փորձութեան հեռանան։ Իսկ որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որք իբրեւ լսեն զբանն՝ և 'ի հոգս և 'ի մեծութիւն և 'ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ հեղձնուն՝ և անպտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ։

### 35. Առաքէ Յիսուս զաշակերտսն 'ի քարոզութիւն։

Եւ կոչեալ Յիսուսի զերկոտասան Առաքեալսն՝ ետ նոցա զզօրութիւն և զիշխանութիւն 'ի վերայ ամենայն դիւաց,

և բժշկել զհիւանդութիւնս։ Նա առաքեաց զնոսա երկուս երկուս քարոզել զարքայութիւնն Աստուծոյ ընդ ամենայն ծագս երկրի։

### 36. Գլխատումն Յովհաննու Մկրտչի։

Յովհաննէս տեսեալ՝ թէ մերձեալ է վախճան իւր, առաքեաց զաշակերտսն իւր առ Յիսուս, զի տեսցեն զսքանչելիս նորա, և աշակերտեսցին նմա, իսկ նա արար առաջի նոցա զբազում սքանչելիս՝ բժշկելով զհիւանդս 'ի պէսպէս ախտից և յայսոց չարաց։ Հերովդէս՝ որ եդեալ էր 'ի բանտ զՅովհաննէս, կամէր սպանանել զնա սակս յանդիմանելոյ նորա զինքն, բայց երկնչէր 'ի ժողովրդենէն, զի ամենեքեան պատուէին զնա իբրև զմարգարէ Տեառն։ Այլ յաւուր խրախութեան, իբրև կաքաւեաց աղջիկն Հերովդիայ առաջի բազմականաց, և հաճեցոյց զՀերովդէս, խրատեալ 'ի մօրէն՝ խնդրեաց յԱրքայէ զգլուխն Յովհաննու մկրտչի, և նա առաքեալ զդահիճ՝ գլխատեաց զՅովհաննէս, և ետ զգլուխն աղջկանն. իսկ աշակերտքն թաղեցին զմարմին նորա, և եկեալ պատմեցին Յիսուսի, և նա տեղի ետ անտի։

### 37. Յագեցուցանէ Յիսուս զհինգ հազար արս հնգ նկանակօք և երկու ձկամբք.

Իբրև դարձան Առաքեալքն 'ի քարոզութենէ մերձ 'ի տօնն զատկի, առանձնացաւ Յիսուս նոքօք հանդերձ յանապատին Բեթսայիդայ, իսկ ժողովուրդն իբրև գիտաց եթէ անդ է, ամենեքեան գնացին զհետ նորա, և նորա ընկալեալ զնոսա՝ խօսէր վասն արքայութեանն Աստուծոյ. և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր զամենեսին. Այլ իբրև օրն սկսաւ տարաժամել, մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն, ժամ է արդ արձակել զժողովուրդս,

զի երթիցեն շուրջ 'ի գեօղս և յագարակս գտանել ըզկերակուրս, և մի՛ մնալ նօթի յանապատի աստ։ Ասէ ցնոսա Յիսուս, դուք տուք դոցա ուտել։ Եւ նոքա ասեն, ոչ գոյ մեզ աւելի քան զհինգ նկանակս և զերկուս ձկունս, բայց եթէ տաս մեզ հրաման՝ երթալ և գնել զկերակուր բաւական ժողովրդեանդ։ Յայնժամ հրամայեաց Յիսուս բազմեցուցանել զնոսա 'ի վերայ խոտոյ դաս դաս յիսուն յիսուն, և առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ, և տայր աշակերտացն՝ արկանել ժողովրդեանն։ Կերան և յագեցան ամենեքեան․ և բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի, և էին որք կերանն՝ իբրև հինգ հազար արք։

### 38. Գնալն Յիսուսի 'ի վերայ ծովուն։

Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն, զոր արար, ասէին, սա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ, մինչև միաբանեալ ամենեցուն՝ կամէին յափշտակել զնա, և կացուցանել 'ի վերայ իւրեանց թագաւոր։ Իբրև գիտաց զայն Յիսուս՝ ել 'ի լեառն միայն, և հրամայեաց աշակերտացն մտանել նաւու յայնկոյս ծովակին, մինչ ինքն ընդ ցամաք գնասցէ առ նոսա։ 'Ի մերձենալ երեկոյին մտին աշակերտքն 'ի նաւ, և գնացին յայնկոյս ծովակին 'ի Կափառնաում, իսկ ծովն 'ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր 'ի գիշերին յայնմիկ, և վարեալ իբրև ասպարէզս քսան և հինգ և աւելի, տեսանէին զՅիսուս 'ի չորրորդում պահու գիշերոյն, զի գնայր 'ի վերայ ծովուն՝ և մերձ էր 'ի նաւն, համարեցան թէ առ աչօք ինչ իցէ, յոյժ զարհուրեալ աղաղակեցին։ Եւ Յիսուս ասէ ցնոսա, քաջալերեցարուք․ ես եմ՝ մի՛ երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս՝ և ասէ, Տէր՝ եթէ դու ես, հրամայեա՛ ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոյս, և նա ասէ՝ եկ։ Եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջուրցն, և եկն առ Յիսուս, բայց տե-

սեալ զՀողմն սաստիկ՝ երկեաւ և սկսաւ ընկղմել, նմին իրի աղաղակեաց ասելով. Տէր փրկեա զիս: Եւ վաղվաղակի ձգեաց Յիսուս զձեռն իւր, կալաւ զնա. և ելեալ 'ի նաւն՝ դադարեաց Հողմն: Իսկ որք 'ի նաւին էին՝ մատեան և երկիրպագին նմա ասելով, արդարև որդի Աստուծոյ ես դու:

Անցեալ անտի 'ի ցամաք՝ եկն 'ի Գենեսարէթ, և իսկոյն ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, և առաքեցին ընդ ամենայն գաւառն, և ածին առ նա զամենայն Հիւանդս, և աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս Հանդերձի նորա մերձեսցին. և որք միանգամ մերձեցան՝ փրկեցան.

39. Աստուածաբանութիւն Յիսուսի զերկնից Հացէն:

Եւ յորժամ էր Յիսուս 'ի Կափառնաում, եկն առ նա ժողովուրդն՝ զորս եթող յանկոյս ծովուն զարմացեալ 'ի վերայ սքանչելեաց Հացին: Իսկ Յիսուս կամելով բացայայտել նոցա զանմաՀական Հացն երկնից՝ ասէ ցնոսա, երթայք, գործեցէք մի' զկորստական կերակուրն, այլ զայն՝ որ տայ կեանս աշխարհի: Իբրև զարմանային նոքա ընդ այս վարդապետութիւն, ասէ. Հարքն ձեր կերան զմանանայն յանապատի անդ՝ և մեռան, ես իսկ եմ Հացն կենաց՝ որ յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ 'ի Հացէ յայսմանէ, կեցցէ 'ի յաւիտեան. և Հացն՝ զոր ես տաց՝ մարմին իմ է, վասն կենաց աշխարհի: Իսկ Հրէայքն 'ի լսելն զայս, Հակառակէին ընդ միմեանս՝ և ասէին, զիարդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել. Ասէ ցնոսա Յիսուս, ամէն ամէն ասեմ ձեզ, զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է. և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է. որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա. Այսու բարձրագոյն վարդապետութեամբ և խորՀրդով մարմնոյ և արեան ցուցանէր զամենակարողութիւն իւր ընդ անՀուն բարութեան, որով Հաղորդէր զինքն իւրոց Հաւատացելոց. Սակայն բազումք ոչ կարելով խելամուտ լինել այնմ՝ ա-

սէին. խիստ է բանդ այդ, և ո՞ կարէ լսել դմա: Գիտացեալ Յիսուս յանձն իւր զտրտունջ նոցա՝ և ասէ. բանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք. որ հաւատայ յիս, ընդունի զկեանս յաւիտենականս:

### 40. Բժշկէ Յիսուս զդուստր կնոջն Քանանացւոյ:

Յետ այսորիկ ելեալ անտի Յիսուս՝ գնաց 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի առ 'ի հեռանալ 'ի Թշնամեաց իւրոց և յատելեաց: Եւ ահա կին մի Քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ՝ աղաղակէր և ասէր, ողորմեա՛ց ինձ, Տէր, որդի Դաւթի, զի դուստրն իմ՝ չարաչար դիւահարի. Իսկ Յիսուս զառաջինն ոչինչ ետ նմա պատասխանի, վասն որոյ մատուցեալ աշակերտացն՝ աղաչէին զնա լսել նմա: Նա պատասխանի ետ և ասէ, ես առաքեցայ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի. իսկ կինն անդադար աղաղակէր, Տէ՛ր օգնեա՛ ինձ: Եւ Յիսուս ասէ, ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց Իսրայէլացւոց՝ և արկանել շանց հեթանոսաց: Իսկ կինն նովին աղաչանօք ասէ. այո՛ Տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ, ո՛վ կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի՛ քեզ, որպէս և կամիս. և ահա 'ի նմին ժամու բժշկեցաւ դուստրն նորա:

### 41. Յագեցուցանէ Յիսուս չորս հազար արս եօթն նշխարհօք և սակաւ ձկամբք:

Անտի գնաց Յիսուս 'ի ծովեզրն Գալիլեացւոց, և իբրև ել 'ի լեառն՝ մատեան առ նա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենայն հիւանդս նոցա, մինչև զարմանալ ամենեցուն 'ի վերայ մեծամեծացն Աստուծոյ, և մնալ առ նմա զաւուրս երիս լսել զբանն կենաց: Եւ Յիսուս կո-

չեալ զաշակերտսն՝ ասէ, գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս անսուաղ, և չըկամիմ արձակել զդոսա նօթիս, գուցէ նքթիցին զճանապարհայն։ Ասեն ցնա աշակերտքն, ուստի՞ իցէ այնչափ հաց՝ յագեցուցանել զայդչափ ժողովուրդ։ Ասէ Յիսուս. քանի՞ նկանակ ունիք, և նոքա ասեն՝ եօթն, և սակաւ ձկունս։ Յայնժամ հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի վերայ գետնոյ, և առեալ զնկանակսն և զձկունսն, օրհնեաց և ետ ցաշակերտսն՝ արկանել ժողովրդեանն։ Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի, իսկ կերողքն էին իբրև արք չորք հազարք, բաց 'ի մանկանց և 'ի կանանց։ Եւ անտի արձակեալ զժողովուրդսըն եկն նաւու 'ի սահմանս Մագդաղեայ։

## 42. Բժշկէ Յիսուս զդիւահար մի խուլ և համր, և զկոյր մի։

Յետ այնորիկ բերին առաջի Յիսուսի զդիւահար մի խուլ և համր, և բժշկեաց զնա. և հրամայեաց մի՛ ումեք ասել զսքանչելիսն. սակայն նա որչափ պատուիրէր՝ նոքա ևս առաւել քարոզէին և փառաւորէին զնա։ Նոյնպէս բժշկեաց և զկոյր մի 'ի Բեթսայիդայ, ընդ որ զարմացան ամենեքին։ Այնուհետև սկսաւ Յիսուս յայտնել աշակերտաց իւրոց զչարչարանս և զանպարտ մահ իւր, զոր կրելոց էր 'ի քահանայապետից և 'ի դպրաց անտի, և զերեքօրեայ յարութիւնն։

## 43. Այլակերպութիւն Քրիստոսի։

Զկնի քարոզելոյ փրկչին յամենայն կողմանս Հրէաստանի, գնաց ապա 'ի կողմանս Կեսարիայ քաղաքին Փիլիպպեայ չորրորդապետի, և հարցանէր ցաշակերտսն իւր՝ ասելով, զո՞ ոք ասեն զինէն մարդիկն թէ իցեմ։ Նոքա պատասխանի ետուն և ասեն, ոմն ասէ զՅովհաննէս, այլք

զԵղիա, ոմանք զԵրեմիա, և կէսք զմի ոք ՚ի մարգարէից անտի։ Ասէ նոցա Յիսուս. Իսկ դուք զո՞ ասէք զինէն, թէ իցեմ ես։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ, Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ։ Ապա յետ վեց աւուրց՝ առեալ ընդ իւր Յիսուսի զՊետրոս, զՅակոբոս և զՅովհաննէս եղբայր ՚ի լեառն Թաբոր առանձինն, և այլակերպեցաւ առաջի նոցա, զի լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ փայլուն յոյժ, և ահա անդ երևեցան Մովսէս և Եղիա, որք խօսէին ընդ Յիսուսի. յայնժամ այլ յայլմէ եղեալ Պետրոսի՝ ասէ ցՅիսուս, Տէր, բարւո՛ք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի Քեզ, և մի Մովսիսի, և մի Եղիայի։ Մինչդեռ նա այսպէս խօսէր, ահա՛ ամպ լուսաւոր հովանի եղև ՚ի վերայ նոցա, և եկն յամպոյ անտի հայրական ձայն, որ ասէր. Դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. դմա լուարո՛ւք։ Իբրև լուան աշակերտքն զայն երկնաւոր բարբառ՝ անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց, և երկեան յոյժ, իսկ Յիսուս մատուցեալ բուռն եհար զնոցանէ՝ և ասէ. յառն կացէք և մի՛ երկնչիք։ Ամբարձին զաչս իւրեանց և ո՛չ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս. Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս մի՛ ումեք ասել զտեսիլն զայն, մինչև որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ։

## 44. Բժշկէ Յիսուս զլուսնոտն։

Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն՝ մատեաւ այր մի, ՚ի ծունր իջանէր՝ ասելով. Տէր, ողորմեա՛ց որդւոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ՚ի ջուր, և երբեմն ՚ի հուր։ Նոյն հետայն սաստեաց Յիսուս դիւին, և ել ՚ի մանկանէն, և բժշկեցաւ մանուկն ՚ի նմին ժամու։ Անտի գնացին ՚ի Գալիլեա, և մինչդեռ շրջէին, միւսանգամ յայտնեաց աշակերտաց իւրոց զչարչարանս և զմահ իւր, թէ որպէս մատնելոց է ՚ի ձեռս մարդոց մեղաւորաց,

և սպանցեն զնա և յերիր աւուր յարիցէ. և նոքա տրտմեցան յոյժ:

### 45. Տուրք Յիսուսի ստանձնելոց զերկդրամեան հարկն:

Եւ 'ի գալն նոցա 'ի Կափառնաում, մատեան առ Պետրոս և պահանջէին զերկդրամեան հարկն, բայց յառաջ քան զայտնելն Պետրոսի՝ հրաման ետ նմա Յիսուս, թէ երթ 'ի ծով և ընկեա՛ զկարթ, և զառաջին ձուկն որ ելանիցէ՝ ա՛ռ և բա՛ց զբերան նորա և գտանիցես զսատեր, և զայն առեալ տացես նոցա վասն իմ և վասն քո:

### 46. Յիսուս խրատէ զաշակերտս իւր լինել խոնարհ և մանուկ և ներողամիտ առ մեղուցելոյ:

Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն՝ ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկնից: Եւ կոչեաց առ ինքն Յիսուս զմանուկ մի, կացոյց զնա 'ի մէջ նոցա և ասէ. ամէն ասեմ ձեզ, եթէ ո՛չ դարձջիք և եղիջիք իբրև զմանկունս, ո՛չ մտանիցէք յարքայութիւնն երկնից: Արդ՝ որ խոնարհեցուսցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեանն երկնից: Դարձեալ մատեաւ Պետրոս առ Յիսուս և ասէ. Տէր, քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցե՞օթն անգամ: Ասէ ցնա Յիսուս. ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ, այլ մինչև յեօթանասնեկին եօթն:

### 47. Առակ անողորմ պարտապանին:

Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւնն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ 'ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ: Իբրև ո՛չ ունէր հատուցանել, անկեալ առ ոտս նորա երկրպագանէր նմա և ա-

ւէր. երկայնամի՛տ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ: Գթացեալ ՚ի նա տէրն իւր՝ եթող զփոխն, և արձակեաց զնա մնալ ազատ ՚ի պարտուց: Իսկ ծառայն ելեալ եգիտ զմի ՚ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. և կալեալ խեղդէր զնա ասելով. հատո՛ ինձ զոր պարտիս: Եւ նա թէպէտ անկեալ յոտս նորա աղաչէր զնա երկայնամիտ լինել, այլ նա ոչ կամէր լսել նմա, մինչև արկ զնա ՚ի բանտ: Զայն իբրև լուաւ թագաւորն՝ կոչեաց զնա, և բարկացեալ ասէ. ծառայ չար և ապերախտ, ես թողի զամենայն պարտս քո, զի դու աղաչեցեր զիս. իսկ արդ՝ ո՞չ էր արժան և քեզ ողորմել ծառայակցին քում. յայնժամ մատնեաց զնա դահճաց: Նոյնպէս և Հայրն իմ երկնաւոր արասցէ ձեզ, եթէ ո՛չ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա:

48. Փարիսեցիք փորձեն զՅիսուս վասն արձակելոյ զկանայս:

Յետ այսորիկ եկն Յիսուս ՚ի Գալիլեէ և գնաց յայնկոյս Յորդանանու. գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զհիւանդս նոցա: Եւ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա և ասէին. եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել: Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս: Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել, և արձակել: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զհրամանն զայն: Այլ ՚ի սկզբանէ արարածոց արու և էգ արար զնոսա Աստուած, և ասէ: Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: Եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի: Արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ:

### 49. Ընտրութիւն եօթանասուն և երկու աշակերտաց։

Յիսուս ընտրեաց այլ ևս եօթանասուն և երկու աշակերտս և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր։ Եւ ասէ. երթա՛յք, առաքեմ զձեզ իբրև զգառինս 'ի մէջ գայլոց. յոր տուն մտանիցէք՝ բժշկեսջիք որ 'ի նմա հիւանդք իցեն, և ասասջիք նոցա. մերձեալ է 'ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ։ Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ։ Յայնժամ սկսաւ վա՜յ տալ քաղաքացն Հրէաստանի, յորս եղեն այնչափ զօրութիւնք և սքանչելիք, և նոքա ոչ հաւատացին, այլ կացին մնացին ապստամբ առաւել քան զՍոդոմացիս և զՍիդոնացիս։ Իբրև դարձան խնդութեամբ 'ի քարոզութենէ եօթանասուն և երկուքն՝ ասեն ցՅիսուս, Տէր, և դևք հնազանդին մեզ յանուն քո։ Եւ նա ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն. ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւնս թշնամւոյն. և ձեզ ոչինչ մեղանչիցեն։

### 50. Առակ Գթած Սամարացւոյն։

Մատեաւ ոմն օրինական և կամեցաւ փորձել զնա և ասէ. վարդապետ՝ զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից։ Եւ նա ասէ. զի՞նչ գրեալ է յօրէնս, պահեա՛ զպատուիրանս և կեցցես։ Իսկ նա ամբարտաւանութեամբ իմն պարծէր, թէ չի՛ք ոք քան զնա պատուիրանապահ։ Նմին իրի ասաց նմա Յիսուս զառակս զայս. Այր ոմն իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց. որք մերկացուցեալ զնա վէրս 'ի վերայ եդին, և թողին կիսամահ։ Իջ ընդ նոյն ճանապարհ Քահանայ մի, և տեսեալ զնա՝ զանց արար։ Նոյնպէս ա-

բար և Ղ՝ևտացի մի ։ Իսկ Սամարացի ոմն անցեալ գնա՝ գթացաւ, և մատուցեալ պատեաց զվէրս նորա · արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի՝ և եդեալ ՚ի վերայ գրաստու՝ ած զնա ՚ի պանդոկ մի, և դարմանեաց զնա։ Եւ ՚ի վաղիւն անդր իբրև կամէր գնալ անտի՝ ետ ցպանդոկապետն զերկուս դահեկանս և ասէ · դարմա՛ն տար դմա, և զոր ինչ ծախեսցես ՚ի դա, ՚ի միւսանգամ դառնալեան իմում հատուցից քեզ ։ Արդ՝ ո՞ յերեցունց անտի եղև առաւել բարերար անկելոյն ։ Եւ նա ասէ · այն՝ որ արար զգործ ողորմութեան։ Ասէ ցնա Յիսուս · երթ, և դու արա՛ զնոյն՝ և կեցցես։

## 51. Մարթա և Մարիամ ։

Մինչև էին աշակերտքն դարձեալ ՚ի քարոզութենէ՝ եմուտ Յիսուս ՚ի գիւղ մի. և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ՚ի տուն իւր ։ Իսկ քոյր նորա Մարիամ եկն նստաւ առ ոտսն Յիսուսի և լսէր ջերմեռանդութեամբ զբանս նորա։ Իսկ Մարթա՝ քանզի զբաղեալ էր ՚ի բազում սպասու. եկն եկաց առ նմա և խնդրեաց, զի հրամայեսցէ քեռն իւրում երթալ օգնել ինքեան ։ Յայնժամ եցոյց նմա Յիսուս · թէ Մարիամ մասն բարի ընտրեաց լսելոյ ձայնի Տեառն, որ ո՛չ բարձցի ընաւ ՚ի նմանէ ։

## 52. Ուսուցանէ Յիսուս ի՞նչ յաղօթս ։

Եւ եղև ՚ի տեղւոջ ուրեք կալ Յիսուսի յաղօթս՝ և իբրև դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէ՛ր. ուսո՛ մեզ յաղօթս կալ, որպէս և Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց։ Ասէ ցնոսա, յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք. Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո · եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր ; Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք

Թողումք մերոց պարտապանաց. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։ Եւ ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, եւ երթիցէ առ նա 'ի մէջ գիշերի, եւ ասիցէ ցնա. բա՛րեկամ տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս։ Զի բարեկամ իմ եկն առ իս յուղւոյ, եւ ո՛չինչ ունիմ դնել առաջի նորա։ Ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեան, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ եւ պիտոյ իցէ։ Զի ամենայն՝ որ խնդրէ, առնու. եւ որ հայցէ՝ գտանէ. եւ որ բախէ՝ բացցի նմա։

## 53. Օրհնէր Յիսուս զմանկունս :

'Ի նմին ժամու մատուցանէին առ նա զմանկունս, զի ձեռն դիցէ 'ի վ՜ն նց՜. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ, որք մատուցանէինն։ Իսկ Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա եւ ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, եւ մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։ Եւ առեալ զնոսա 'ի գիրկս, ձեռն եդ 'ի վերայ՝ եւ օրհնեաց զնոսա։

## 54. Առակ աշխարհասէր ագահին :

Խօսեցաւ անդ եւ առակ մի՝ եւ ասէ. առն ուրուն մեծատան եռուն անդք առհմականս. խորհէր 'ի միտս իւր՝ եւ ասէր։ Քակեցից զշտեմարանս իմ, եւ ես մեծամեծս շինեցից, եւ անդր ժողովեցից զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ. եւ ասացից ցանձն իմ. անձն՝ ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց, հանգի՛ր, կե՛ր, ա՛րբ եւ ուրա՛խ լեր։ Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջեսցեն, իսկ զոր պատրաստեցերն, ո՞ւմ լինիցի։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. վասն այդորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զի՞նչ ուտիցէք, եւ

մի՛ ընդ մարմնոյ, թէ զի՞նչ զգենուցուք։ Հայեցարո՛ւք ի թռչունս, որք ոչ սերմանեն և ոչ հնձեն, այլ Աստուած կերակրէ զնոսա։ Հայեցարո՛ւք ընդ շուշանն՝ որպէս աճէ։ Խնդրեցէ՛ք ասէ, նախ զարքայութիւնն Աստուծոյ, և այն ամենայն յաւելցի ձեզ։

### 55. Բժշկէ Յիսուս զայր բորոտ,

Իբրև ելանէր փրկիչն յԵրուսաղէմ, էանց ընդ մէջ Սամարեայ և Գալիլեացւոց. և 'ի մտանելն 'ի գիւղ մի՝ պատահեցին նմա տասն արք բորոտք, որք կացեալ 'ի հեռաստանէ՝ բարձին զձայնս և ասեն. Յիսուս վարդապետ՝ ողորմեա՛յ մեզ։ Իսկ նա պատուիրեաց նոցա երթալ ցուցանել զանձինս իւրեանց քահանայիցն։ Իբրև գնային, առժամայն սրբեցան։ Մի ոմն 'ի նոցանէ երախտագէտ մտօք դարձեալ առ Յիսուս 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած. և անկեալ առ ոտս նորա՝ գոհանայր զնմանէ. և ինքն էր Սամարացի։ Ասէ Յիսուս, ո՞չ տասն արքս սրբեցան, իսկ արդ՝ ինունքն ո՞ւր են։ Ոչ ի՞ ոչ գտացին դառնալ փառս տալ Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։ Ապա ասէ ցայրն. արի՛, գնա՛. զի հաւատք քո կեցուցին զքեզ։

### 56. Զայրն կաթուածեալ,

Իբրև ուսուցանէր 'ի ժողովրդանոցն յաւուր շաբաթու, տեսեալ անդ զկին մի դիւահար, որ յութուտասն ամաց հետէ կորկամեալ՝ չկարէր և ոչ իսկ 'ի վեր հայել, հրամայեաց բերել զնա առ ինքն։ Եւ գթացեալ 'ի նա՝ ասէ, կի՛ն դու, արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ. և եդեալ 'ի վերայ նորա զձեռն իւր, առժամայն բժշկեալ ուղղեցաւ կինն, և փառաւոր առնէր զԱստուած։ Իսկ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր Յիսուս 'ի շաբաթու բժշկեաց, ասէ ցժողովուրդն. վեց օր է, յորս արժան է,

գործել, յայնս՝ եկա՛յք բժշկեցարո՛ւք. և մի՛ յաւուր շաբաթու: Եւ զի պապանձեցուսցէ Յիսուս զժողովրդապետն ասաց. կեղծաւորք, իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յաւուր շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ, և տանի տայ ջուր: Իսկ այս դուստր Աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ. ո՞չ արժան էր արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու: Զայս իբրև ասաց Յիսուս, յամօթ լինէին ամենեքեան՝ որք հակառակն կային նմա. իսկ հասարակ ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն զօրութեանցն, որք գործէին 'ի նմանէ:

57. Այր Ջրգողեալ:

Հրաւիրեցաւ ևս Յիսուս 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց. և գտաւ անդ այր մի ջրգողեալ առաջի նորա: Յայնժամ Յիսուս եհարց զօրէնսուսոյսն և զփարիսեցիսն, որք անդ բազմեալ էին, եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել: Եւ 'ի պապանձել նոցա՝ բուռն հարեալ զնմանէ բժշկեաց զնա: Ապա ասէ ցնոսա. ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրահոր, և ո՛չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: Եւ ո՛չ կարացին տալ նմա պատասխանի:

58. Խրատ առ կոչնականս և առ կոչնատէրս:

Յետ այնորիկ սկսաւ խրատել զկոչնականսն, որք ջանային բարձրնստիք լինել. յորժամ՝ ասէ, կոչիցէ ոք զքեզ 'ի կոչունս, մի՛ բազմեսցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ 'ի նմանէ. և եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց, ասիցէ ցքեզ. տո՛ւր սմա տեղի. և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել: Այլ յորժամ դնաս, բազմեա՛ց 'ի յետին տեղւոջ. և տեսեալ զքեզ անդ՝ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. բա-

ընկալ, 'ի վեր մատիր. յայնժամ եղիցի քեզ փառք առաջի բազմականացն քոց: Ապա դարձուցեալ զբանս իւր առ կոչնատէրն՝ ասէ. յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զդրացիս քո, և մի՛ ըզմեծամեծս, զի մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ. և լինիցի քեզ հատուցումն: Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս: Եւ երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանել քեզ. և հատուսցի քեզ 'ի յարութեան արդարոց: Զայս լուեալ մին 'ի բազմականացն՝ ասէ. երանի՜ որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ: Առ այս օրինակ ետ Յիսուս զՄեծատունն՝ որ արար ընթրիս և հրաւիրեաց զբազումս. այլ նոքա ծուլացեալ՝ մին գնաց յագարակ իւր. մին փորձել զեզինս իւր: Եւ այլ մին առ կին իւր. և բարկացեալ տանուտեառն՝ արհամարհեաց զնոսա, և եմուծ 'ի կոչունս իւր զաղքատս, զխեղս և զկոյրս: Ապա ասէ. ոչ որ յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց:

### 59. Բժշկէ զայր 'ի ծնէ կոյրն:

Մինչդեռ Յիսուս յԵրուսաղէմ էր, ետես նա յաւուր շաբաթու զկոյր մի 'ի ծնէ. հարցին աշակերտքն զնմանէ, և ասեն, Ռաբբի՝ մի՛ պատճառ կոյր ծնեալ է սա, արդեօք վասն յանցանաց իւր, թէ հօր և մօր իւրոյ: Պատասխանի ետ Յիսուս, ոչ դորա յանցանք են, և ոչ ծնողաց իւրոց, այլ զի յայտնի փառաւորեսցին գործքն Աստուծոյ 'ի դմա. և ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս: Ապա եթուք 'ի գետին, և արար կաւ. և ծեփեաց այնու զաչս կուրին. և հրամայեաց նմա երթալ և լուանալ յաւազանին Սելովամայ, որոյ ջուր գալով յականէ Գեհովնի՝ լցեալ 'ի վերին կողմն քաղաքին՝ կայէր առաքեալ. Գնաց կոյրն և լուացաւ ըստ հրամանի նորա և բա-

ցան աչք նորա։ Իսկ ծանօթք նորին և դրացիք զարմացեալք ասէին. ոչ սա է՝ որ նստէրն և մուրանայր ։ Ոմանք ասէին, նա է. այլքն ասէին. նման է նմա. իսկ ինքն ասէր՝ ես եմ ։ Հարցին զնա և ասեն, իսկ զիա՞րդ բացան աչք քո. նա պատասխանի. այր մի՝ որում Յիսուս ասեն, կաւարար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. երթ ՚ի Սիլովամ և լուա՛, չոգայ լուացայ՝ և տեսանեմ ։ Ածին զնա առ փարիսեցիս, որք հարցին զնա՝ թէ զիա՞րդ տեսանես, և նա զնոյն պատասխանի ետ նոցա ։ Իսկ նոքա հայհոյէին բզՅիսուս, և ոչ կամէին հաւատալ, թէ նա եբաց զաչս նորա. մինչև կոչեցին զծնողս բացելոյն և հարցին. թէ սա՞ է որդին ձեր, զորմէ ասէիք, թէ կոյր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ. նոքա ասեն՝ թէ սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. բայց թէ այժմ զիա՞րդ տեսանէ, կամ թէ ո՞ եբաց զաչս դորա, մեք ոչ գիտեմք. զդա ինք հարցէք ։ Դարձեալ հարցին զկոյրն և ասեն, տուր փառս Աստուծոյ. մեք գիտեմք, զի այրն այն մեղաւոր է։ Եւ նա ասէ՝ թէ ես ոչ գիտեմ զնա թէ մեղաւոր իցէ, այլ զայս գիտեմ, զի կոյր էի, և տեսանեմ. Ի յաւիտենից ոչ ոք լուաւ՝ եթէ ոք եբաց զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ. եթէ նա ոչ էր Աստուծոյ, ո՞րպէս կարէր առնել զայսպիսի սքանչելիս։ Ընդ այս բանս զայրացեալ նոքա ասեն. ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին. և դու վարդապետ լինիս մեզ. և անդէն հանին զնա արտաքս։ Զայն լուեալ Յիսուսի, եգիտ եկեալ զնա, կամեցաւ յայտնել նմա զինքն լինել որդի Աստուծոյ ։ Եւ նա առ ժամայն դաւանեալ ասէ. հաւատամ՝ Տէր, և երկիր եպագ նմա ։

## 60. Կին շնացեալ ։

Դեռ ևս Յիսուս էր յԵրուսաղէմ, և ածին առաջի նորա փարիսեցիքն զկին մի ըմբռնեալ ՚ի շնութեան և փորձելով հարցանէին վասն նորա, զի չարախօսեսցեն զնմանէ ։ Իսկ փրկիչն գթացեալ ՚ի կինն՝ գրէր մատամբ ՚ի գետնի, և ասէ

ցնոսա. եկայք ամենեքեան ընթերցջիք զգիրս զայս . և որ անմեղն է 'ի ձէնջ, նախ նա ընկեսցէ քար 'ի վերայ դորա։ Եւ ընթեռնուին մի ըստ միոջէ զյանցանս իւրեանց և սկսեալ 'ի քահանայապետուց մինչև ցփարիսեցին՝ ելին ամենեքեան, և մնաց միայն կինն. և ասէ ցնա Յիսուս, և ոչ ես կամիմ դատապարտել զքեզ. երթ, այլ մի՛ ևս մեղանչիր յայսմհետէ։

61. Առակք կորուսելոյ ոչխարին և կորուսելոյ դրամոյն.

Յիսուս բազում ինչ առակօք խօսէր առ 'ի դիւրիմաց առնել զգերմարդկային վարդապետութիւն իւր։ Եւ յորժամ մերձ էին առ նա բազում մաքսաւորք և մեղաւորք լսել 'ի նմանէ զկենսատու բանս, սկսան փարիսեցիք և Դպիրք տրտնջել զնմանէ՝ թէ ընդէ՞ր ընդունի զսոսա։ Յայնժամ ասաց առ նոսա Յիսուս զառակս զայս. եթէ ոք 'ի ձէնջ կորուսանիցէ զմի 'ի հարիւր ոչխարաց իւրոց. ո՞չ թողուցու զիննսուն և զինն յանապատի, և երթիցէ զհետ կորուսելոյն, մինչև գտանիցէ զնա : Իսկ ընդ գտանելն դնէ զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով. և կոչէ զբարեկամս իւր և ասէ. ուրախ եղերուք ընդ իս. զի գտի զոչխարն իմ զկորուսեալ : Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ . քան վասն իննսուն և ինն արդարոց։ Կամ թէ կին ոք կորուսանիցէ զմի 'ի տասն դրամոց. ո՞չ լուցանէ ճրագ և ածէ աւել 'ի տուն մինչև գտանիցէ զայն, և իբրև գտանէ՝ կոչէ զբարեկամսն և զդրացիս, և ասէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի։ Այսպէս լինի ուրախութիւն առաջի հրեշտակաց Աստուծոյ 'ի վերայ միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ։

62. Անառակ որդւոյն.

Յաւել Յիսուս և զայս առակ : Այր մի ունէր երկու

որդիս․ կրտսերն աղաչեաց զհայրն, և էառ զբաժին իւր յինչից նորա․ և յետ ոչ բազում ինչ աւուրց գնաց յաշխարհ հեռի և անառակութեամբ վատնեաց զբաժին իւր։ Յետ այնորիկ եղև անդ սով սաստիկ, մինչև սկսաւ ինքն ևս չքաւորիլ․ և առ դառնութեան սովոյն՝ գնաց յարեցաւ յումն բարեկեցիկ առ 'ի գտանել կերակուր․ իսկ նա յղեաց զնա յագարակ իւր արածել զխոզս։ Սակայն և այնպէս առ կարի իմն չքաւորութեան ցանկայր ուտել յեղջերէն, զոր խոզքն ուտէին։ Անդ ապա անագան եկն 'ի միտս իւր և ասէ․ Քանի՞ վարձկանք են 'ի տան հօր իմոյ հացալիցք․ և ես աստ սովամահ կորնչիմ․ յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից․ Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ ես եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց։ Այն ինչ կորագլուխ գնայր առ հայր իւր․ ետես զնա հայրն 'ի հեռուստ, և շարժեալ 'ի գթոյն՝ ընթացաւ ընդ առաջ նորա, և անկեալ զպարանոցաւն՝ համբուրեաց զնա։ Ասէ ցնա որդին․ Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո․ ոչ ես եմ արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայս իւր․ վաղվաղակի բերէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռս նորա, և զկօշիկս յոտս նորա․ ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր, և եկաց․ կորուսեալ էր, և գտաւ․ և այսպէս սկսան ամենեքեան ուրախ լինել։ Իսկ երէց որդի նորա քանզի յագարակի էր, իբրև եկն և մերձեցաւ 'ի տունն, և լուաւ զձայն երգոց և պարուց․ եհարց և իմացաւ զպատճառն․ բարկացաւ և ոչ կամէր մտանել 'ի ներքս․ Իսկ հայրն ելեալ արտաքս աղաչէր զնա․ այլ նա 'ի դէմս ածէր հօրն, թէ այսչափ ամս ծառայեցի քեզ հնազանդութեամբ, և ոչ երբէք անցի զպատուիրանաւ քով․ ուլ մի ոչ ետուր ինձ ուրախանալ ընդ բարեկամս իմ․ իսկ յորժամ եկն այդ անառակ որդիդ՝ զեներ դմա զեզն պարարակ։ Եւ նա ասէր․ որդեակ, դու հանապազ ընդ իս ես․ և ամե-

նոյն՝ որ ինչ իմն է, քո է. այլ ուրախ լինել պարտ էր, զի եղ-
բայր քո այս մեռեալ էր՝ և եկաց, կորուսեալ էր՝ և գտաւ։
Ահա այսու առակաւ յամօթ արար Յիսուս զփարիսեցիս,
որք իբրև զերէց եղբայրն չկամէին տալ վայելել կրտսե-
րոյն ՚ի գութ հօրն, որ ոչ կամէր զմահ մեղաւորին, այլ
զդառնալ նորա և զկեալն։

## 63. Տնտեսն,

Յաւել և ցայս առակ։ Այր ոմն մեծատուն ունէր տըն-
տես, որ անհաւատարիմ գտեալ ՚ի գործ պաշտաման իւ-
րոյ՝ ամբաստանեցաւ առաջի տեառնն՝ որպէս թէ վատնիցէ
զինչս նորա։ Նմին իբր կոչեաց զնա տէր իւր և ասէ, զի՞նչ
է այս, զոր լսեմ զքէն. տուր զհամար տնտեսութեան քո,
զի ոչ ևս կարես լինել տնտես։ Յայնժամ ասէ ընդ միտս
իւր տնտեսն. զի՞նչ արարից. իբրև ելանիցեմ ՚ի գործոյ
տնտեսութեանս, գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ։
Յայնժամ խորհեալ նորա խորամանկ խորհուրդ՝ կոչեաց
առ ինքն մի ըստ միոջէ զպարտապանս տեառն իւրոյ և ասէ
ցառաջինն. քանի՞ ինչ պարտիս տեառն իմում, և նա ասէ՝
հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա, թողեալ զկէսն՝ նիստ գըր-
եա վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ցմիւսն ասէ. դու քա-
նի՞ ինչ պարտիս. և նա ասէ՝ հարիւր քոռ ցորենոյ. և ասէ՝
առ զգիր քո, և գրեա ութսուն։ Զայս իբրև լուաւ տէր
իւր՝ գովեաց զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ
եթող նոցա, որպէս զի յետ ելանելոյ ՚ի տնտեսութենէն՝
նոքա ընկալցին զնա ՚ի տունս իւրեանց. Այսու առակաւ
խրատ ետ Յիսուս՝ երկրաւոր մամոնայիւ ՚ի ձեռն ողորմու-
թեան բարեկամս ունել զաղքատս և զտուրքս. զի յետ մա-
տեացս ընկալցին նոքա ՚ի յարկսն յաւիտենականս։

## 64. Մեծատունն և Ղազարոսն,

Դարձեալ այլ առակ արկ Յիսուս առ նոսա և ասէ.

այր մի էր մեծատուն և ագանէր բեհեզս և ծիրանիս և Համապազ ուրախ լինէր առատապէս։ Եւ աղքատ մի անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան մեծատան վիրաւորեալ. և ցանկայր կերակրել ’ի փշրանաց սեղանոյ նորա։ Իսկ շունք գային և լեզուին զվէրս նորա. Ղազարոս յետ բազում համբերութեան մեռաւ յայսպիսի տառապանս. և զհոգի նորա հանգուցին հրեշտակք ’ի գոգն Աբրահամու։ Յետ այնորիկ մեռաւ և մեծատունն և թաղեցաւ փառօք. այլ ’ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ’ի տանջանսն էր. ետես զԱբրահամ ’ի հեռաստանէ, և զՂազարոս ’ի գոգնորա հանգուցեալ. և աղաղակեաց ’ի խորոց սրտի և ասէ. Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ. և առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ’ի ջուր, և զովացուսցէ ըզլեզու իմ, զի պապակիմ ’ի տապոյ աստի։ Իսկ Աբրահամ վիհ մեծ է՝ ասէ, ’ի մէջ մեր. զի ոչ ոք կարէ այտի առ մեզ անցանել, և ոչ աստի ոք առ ձեզ։ Այլ յուշ լիցի քեզ. զի դու ընկալար յաշխարհի զբարիս ’ի կեանս քում. իսկ Ղազարոս ընկալաւ համբերութեամբ զչարչարանս. արդ՝ արժանի է, զի սա աստ մխիթարեսցի. և դու այդր պատուհասցիս։ Կրկնեաց անդէն՝ արդ աղաչեմ զքեզ հայր, արձակեա զդա ’ի տուն հօր իմոյ, զի են իմ անդ եղբարք հինգ, տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ Եւ ասէ Աբրահամ, նոքա ունին զՄովսէս և զգիրս Մարգարէից, ’ի նոցանէ խրատեսցին։ Եւ նա ասէ. ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ ’ի մեռելոց ոք երթիցէ՝ հաւատասցեն և ապաշխարեսցեն։ Ասէ ցնա. եթէ Մովսիսի և Մարգարէից ոչ լսեն, և ոչ եթէ ’ի մեռելոց ոք երթիցէ՝ հաւատասցեն։

### 65. Պատարքն,

Օրինի այնորիկ երբև կամեցաւ Յիսուս յորդոր լինել ժողովրդեան՝ անդադար կալ յաղօթս և մի՛ ձանձրանալ.

ասէ առակաւ. Դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն. յԱստուծոյ ոչ երկնչէր, և 'ի մարդկանէ ոչ ամաչէր. և այրի մի էր 'ի նմին քաղաքի զրկեալ 'ի Թշնամւոյ իւրմէ. գայր առ նա և ասէր. դատ արա ինձ յոսոխէ իմմէ. բայց դատաւորն անիրաւութեան 'ի բազում ժամանակս ոչ կամէր լսել նմա. ապա երբև կարի իմն Թախանձեցաւ 'ի նմանէ, ասէ 'ի մտի իւրում. Թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ, և 'ի մարդկանէ ոչ ամաչեմ, դո՛նէ վասն Թախանձելոյ և աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի 'ի սպառ եկեալ Թախանձիցէ զիս։ Ապա 'ի վերայ եբեր Յիսուս. տեսանէք զի՛նչ խորհի դատաւորն անիրաւութեան, իսկ Աստուած՝ որ դատաւոր է արդարութեան, ո՞չ լուիցէ ծառայից իւրոց, որք աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի. այո՛ ասեմ ձեզ. արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի, և դատեսցէ զդատաստան նոցա արդարութեամբ։

## 66. Փարիսեցւոյն և Մաքսաւորին։

Յետ այսորիկ ասաց Յիսուս զառակս զայս առ ոմանս պանծացեալս յանձինս թէ արդարք իցեն՝ և խոտիցեն զբազումս։ Արք երկու ելին՝ ասէ, 'ի տաճարն կալ յաղօթս. մին փարիսեցի՝ և միւսն Մաքսաւոր. փարիսեցին կայր մեկուսի, և զայս առանձին աղօթս մատուցանէր պանծալով. Աստուած, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրև զայլս 'ի մարդկանէ՝ զյափշտակօղս, զանիրաւս և զշունս կամ իբրև զայս Մաքսաւոր. Այլ պահեմ երկիցս 'ի շաբաթու. և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Իսկ Մաքսաւորն ծանուցեալ զինքն յանցաւոր՝ կայր մեկուսի յանկեան տաճարին. և առ խոնարհութեան ոչ կամէր զաչս 'ի երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր և ասէր, Աստուած, քաւեա՛ զիս զմեղաւորս։ Յաւել ասել Փրկիչն. ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զփարիսեցին. զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

### 67. Անձապաւն ընչաւէր:

Յայնմ ժամանակի՝ երբեւ երթայր Յիսուս 'ի ճանապարհին, ընդ առաջ եղեւ նմա ոմն մեծատուն. 'ի ծունր իջանէր և ասէր. վարդապետ բարի, զի՞նչ գործեցից, զի ըզկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Պատասխանի ետ Յիսուս. զի՞ հարցանես զիս զբարւոյ, ո՞չ գիտես զպատուիրանս Աստուծոյ, եթէ կամիս մտանել 'ի կեանս, պահեա՛ զպատուիրանս: Ասէ ցնա այրն. պահեալ եմ զայնս 'ի մանկութենէ իմմէ, Յայնժամ ասէ ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ զամենայն զոր ունիս, վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց, զի ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ: Իբրեւ լուաւ զայս մեծատունն՝ տրտմեցաւ յոյժ, և մեկնեցաւ անտի. զի ունէր ինչս բազումս: Եւ ասէ Յիսուս. ո՞րչափ դժուարին է մեծատանց մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրագոյն է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան այսպիսի մեծատանց յարքայութիւն Աստուծոյ մտանել: Յայնժամ ասէ Պետրոս ցՅիսուս. ահա մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո. արդ զի՞նչ տրիտուր տացի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, 'ի միւսանգամ գալստեան իմում՝ յորժամ նստայց յաթոռ փառաց իմոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգսն Իսրայելի: Եւ ամենայն որ՝ որ ատեայ զաշխարհ վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ, և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ:

### 68. Առակ հաւասար վարձատրութեան մշակաց այգւոյն:

Յետ այսորիկ ասաց Յիսուս և զառակս զայս. Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ընդ առաւօտս 'ի վարձու կալեալ զմշակս՝ արկ վարձս աւուրն դահեկան, և առաքեաց յայգի իւր գործել, Ապա ելեալ յերրորդ ժամու, 'ի վեց ժամու, յինն ժամու 'ի մետասաներորդ ժա-

մու, եգիտ զայլս դատարկ և առաքեաց յայգի իւր։ Իբրև երեկոյ եղև, պատուիրեաց գաւառապետին իւրոյ տալ մշակացն զվարձս՝ սկսեալ 'ի յետնոցն մինչև ցառաջինն։ Իբրև առին մէն մի դահեկան եկեալքն 'ի մետասաներորդ-ժամուն՝ առաջինքն համարէին թէ աւելի առնուցուն, բայց և նոքա առին մէն մի դահեկան։ Նմին իրի տրտնջէին ընդդէմ տանուտեառնն ասելով, թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և դու արարեր զդոսա հաւասարակորդս մեզ, որ զծանրութիւն և զտօթ աւուրն բարձաք։ Իսկ նա ետ պատասխանի, թէ չզրկեմ զձեզ. ոչ դահեկանի միոջ սակ արկէք ընդ իս, առէք զայդ և երթիջիք. եթէ կամիմ՝ կարեմ տալ յետնոցս՝ որպէս ձեզ. այլ ձեր ակն չար է, և ես առատ եմ։ Ըստ այսմ ասէ Յիսուս, 'ի վերջին դատաստանի եղիցին յետինք առաջինք՝ և առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։

## 69. Յարութիւն Ղազարու։

Էր ոմն հիւանդ Ղազարոս եղբայր Մարիամայ և Մարթայի 'ի Բեթանիայ գեղջէ, որ իբրև հիւանդացաւ՝ առաքեցին քորքն նորա զոմն առ Յիսուս և ասեն. Տէր, ահաւադիկ զոր դուն սիրէիր, հիւանդացեալ է։ Իսկ Յիսուս 'ի նմին ժամանակի յայնկոյս Յորդանանու առանձնացեալ կայր յերեսաց Թշնամեաց իւրոց, որք խնդրէին զնա քարկոծ առնել. իբրև լուաւ՝ եթէ բարեկամն իւր հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն, ուր էրն աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցաշակերտսն իւր. եկայք երթիցուք միանգամ 'ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. Րաբբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել. և դարձեալ երթաս անդրէն։ Ասէ ցնոսա Յիսուս. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, երթամ զարթուցանել զնա։ Աշակերտքն համարելով՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ, ասէին. եթէ ննջեաց, ապա ապրի։ Յայնժամ ասէ յայտնապէս,

թէ Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ, զի դուք տեսեալ զքանչելիս իմ՝ հաւատասջիք յիս: Եւ եկն Յիսուս 'ի Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրև հնգետասան ասպարիսօք: Անդ բազումք 'ի Հրէից եկեալ էին մխիթարել ըզքորսն Ղազարու: Մարթա իբրև լուաւ՝ եթէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց և ասէ ցնա. Տէր, եթէ աստ էիր լեալ, եղբայրն իմ չէր մեռեալ. սակայն հաւատամ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ, տացէ քեզ: Ասէ ցնա Յիսուս. յարիցէ եղբայրն քո: Ասէ ցնա Մարթա. գիտեմ, զի յարիցէ յաւուրն յետնում: Յայնժամ Յիսուս հաստատեաց զհաւատս նորա, թէ ինքն է Որդի Աստուծոյ՝ տէր մահու և կենաց, մինչև աղաղակեաց Մարթա. ես հաւատացի եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր: Ապա գնաց անտի Մարթա և կոչեաց լռելեայն զքոյր իւր զՄարիամ, և ասէ. վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ: Նա իբրև լուաւ՝ յարեաւ վաղվաղակի և եկն առ Յիսուս. իսկ Հրէայքն, որք էին ընդ նմա 'ի տան անդ առ 'ի մխիթարել զնա, գնացին զհետ նորա, համարելով՝ թէ 'ի գերեզմանն երթայ, զի լացէ անդ: Բայց Մարիամ եկեալ առ Յիսուս՝ անկաւ յոտս նորա և ասէ. Տէր, եթէ աստ էիր գտեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յիսուս իբրև ետես զնա յանմխիթար լաց, և ամենայն բարեկամքն լային ընդ նմա. շարժեցաւ գութ նորա և ասէ. Ո՞ւր եդիք զնա: Ասեն ցնա. եկ և տես. իբրև ետես Յիսուս զգերեզման բարեկամին՝ արտասուեաց 'ի վերայ նորա. ապա հրամայեաց 'ի բաց առնուլ զվէմ գերեզմանին, և սկըսաւ աղաչել զերկնաւոր Հայր իւր՝ ցուցանել զփառս և զսքանչելիս Աստուածութեան իւրոյ: Ապա աղաղակեաց Յիսուս 'ի ձայն բարձր. Ղազարէ, արի եկ արտաքս. և ահա՛ զոյգ ընդ ձայնին յարեաւ մեռեալն չորեքօրեայ՝ կապեալ ոտիւք և ձեռօք: Ասէ ցնոսա Յիսուս. լուծէք զդա և թողէք երթալ: Իբրև տեսին՝ որք անդն կային, զի մեռեալն խօսի և ընթանայ. բազումք հաւատացին 'ի նա. և ոմանք

գնացին առ փարիսեցիսն և պատմեցին նոցա զսքանչելիսն, զոր արար Յիսուս։ Յայնժամ Թշնամիք նորա Քահանայապետք և փարիսեցիք ժողովեցին ատեան, և ասեն ցմիմեանս. զի՞նչ արդեօք արասցուք, զի այրն այն բազում նշանագործութեամբ դարձուցանէ զաշխարհ, և եթէ թողումք զնա այնպէս, գայցեն Հռոմք և բառնայցեն զտեղի և զազգս մեր։ Անդ քահանայապետն տարւոյն այնորիկ Կայիափայ խորհուրդ ետ նոցա և ասէ. լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի՛ ամենայն ազգս կորիցէ։ Զայս ոչ յանձնէ ինչ ասաց նա, այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ թէ Յիսուս մեռանելոց էր 'ի վերայ ազգին և ժողովրդեան առ 'ի ժողովել զցրուեալ որդիսն Աստուծոյ 'ի մի։ Ապա յայնմ օրէ խորհուրդ վասն հաստատեցին նոքա սպանանել զնա։ Իսկ Յիսուս այնուհետև ոչ համարձակ ինչ շրջէր 'ի մէջ Հրէից, այլ գնաց անտի յԵփրայիմ դիւղաքաղաք, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։

### 70. Մայր որդւոցն Զեբեդեայ։

Անցեալ էին զկնի մկրտութեանն Յիսուսի երեք զատկական տօնք։ Այս չորրորդ տօնս եղև վերջին, յորում պարտ էր փրկչին կատարել կամաւոր մահուամբ զամենայն գրեալս վասն իւր 'ի Մարգարէից անտի։ Նորին աղագաւ հարկ եղև նմա անդրէն դառնալ յԵրուսաղէմ և մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղաւորաց և 'ի խաչ ելանել։ Զայս ամենայն պատմեաց Յիսուս աշակերտաց իւրոց զճանապարհայն։ Ի նմին ժամանակի բազումք ելանէին յԵրուսաղէմ յառաջ քան զզատիկն, որպէս զի սրբեսցեն զանձինս իւրեանց ըստ օրինացն։ Ուրանօր խնդրէին զՅիսուս թշնամիք նորա. և ասէին ցմիմեանս՝ մինչ կային 'ի տաճարին. զիա՞րդ թուի ձեզ, ո՞չ գայցէ 'ի տօնս։ Քանզի պատուէր տուեալ էր Քահանայապետիցն և փարիսեցւոց, զի

թէ ով գիտասցէ՝ թէ ուր է Յիսուս՝ գուշակեսցէ. զի կալցեն զնա։ Յայնժամ մայր որդւոցն Զեբեդեայ համդերձ որդւովք իւրովք մատեաւ առ նա, երկիրպագանէր և խնդրէր, զի յորժամ յայտնեսցի թագաւորութիւն նորա, բարձրացուսցէ զորդիս իւր յիշխանութիւն՝ նստուցանելով զմին ընդ աջմէ, և զմիւսն ընդ ահեկէ յարքայութեան իւրում։ Նա պատասխանի Յիսուս. իմ թագաւորութիւն չէ՝ որպէս աշխարհի, այլ որ ոք կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ամենեցուն ծառայ։

### 71. Երիքովի կոյրքն։

Եւ կալեալ Յիսուսի զճանապարհ Երիքովի՝ իբրև մօտ եղև 'ի քաղաք անդր՝ պատահեցան նմա երկու կոյրք նստեալք առ ճանապարհաւն մուրացիկ, որոց լուեալ, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ, աղաղակեցին՝ Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմեա՛ց մեզ։ Զտեղի եառ Յիսուս, և կոչեաւ զնոսա առ ինքն՝ առ ժամայն բժշկեաց, որք երթային զհետ նորա և փառաւոր առնէին զԱստուած։

### 72. Զակքէոս։

Եւ իբրև մտեալ Յիսուս շրջէր ընդ Երիքով, ահա այր մեծատուն մաքսապետ Զակքէոս անուն խնդրէր տեսանել՝ թէ ո՛վ իցէ Յիսուս, բայց ո՛չ կարէր 'ի խուռն բազմութենէն, զի կարճ էր հասակաւ, վասնորոյ յառաջ ընթացեալ՝ ել 'ի ժանտաթզենին, ընդ որ անցանելոց էր Յիսուս։ Իբրև եկն 'ի տեղին, հայեցաւ 'ի վեր Յիսուս և ասէ ցնա. Զակքէ, փութա՛, էջ այտի. զի այսօր արժա՛ն է ինձ 'ի տան քում ագանիլ։ Իսկ նա անդէն փութանակի էջ, և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Նա 'ի զեղջ եկեալ՝ ասէ ցնա. Տէ՛ր, ահա՛ զկէս ընչից իմոց տաց աղքատաց, և եթէ զոք զրկեցի՝ հատուցից չորեքկին։ Յայն-

ժամ ասէ ցնա Յիսուս. այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ: Քանզի և սա որդի Աբրահամու է: Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն:

## 73. Առակ վասն դանկացն:

Մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել Յիսուս առակ մի վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ, և համարելոյ նոցա, եթէ առ ժամայն յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ: Եւ ասէ. այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ զիւր թագաւորութիւն և դառնալ: Եւ կոչեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս ասելով՝ յարդեցէք զայդ՝ մինչև եկից: Իսկ քաղաքացիքն ատէին զնա, մինչև առաքեցին և զկնի նորա հրեշտակս ասելով՝ թէ ոչ կամիմք թագաւորել դմա 'ի վերայ մեր: Եւ եղև իբրև դարձաւ՝ առեալ զթագաւորութիւնն, կոչեաց զծառայս իւր՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ՝ թէ ո՛ զի՛նչ շահեցաւ: Եկն առաջինն և ասէ. տէր, մնասն քո արար տասն մնաս: Եւ նա ասէ ցնա. ա՛ղնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետև 'ի փոքու հաւատարիմ եղեր, լիջի՛ր իշխանութիւն ունել 'ի վերայ տասն քաղաքաց: Եկն երկրորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս: Ասէ և ցնա տէրն. և դու լիջի՛ր իշխան 'ի վերայ հինգ քաղաքաց: Եկն և միւսն և ասէ. տէ՛ր՝ ահա մնասն քո, զոր ունէի ծրարեալ 'ի վարշամակի. երկնչէի 'ի քէն, զի այր ստամբակ ես, բառնաս, զոր ոչ եդեր, և հնձես, զոր ոչ սերմանեցեր: Եւ նա ասէ. 'ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծա՛ռայ անհաւատ, գիտէիր՝ թէ ես այր ստամբակ եմ, ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ 'ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի. և ասէ ցսպասաւորսն. առէ՛ք 'ի դմանէ զմնասն և տո՛ւք այնմ, որ ունիցի զտասն մնաս. ասեմ ձեզ, եթէ ամենայնի՝ որ ունիցի՝ տացի. և յայնմանէ՝ որ ոչ ունիցի՝ և զոր ունիցի՝ բարձցի: Բայց զթշ-

Թշնամիսն իմ զայնոսիկ, որք ո՛չ կամէին զիս թագաւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ։

## 74. Մարիամայ օծանելն։

Վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն Յիսուս 'ի Բեթանիա՝ և անդ հրաւիրեցաւ յընթրիս 'ի տուն Սիմոնի բորոտի։ Ուր 'ի սպասու կայր Մարթա՝ և Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարիամայ առեալ լիտր մի աղնիւ իւղոյ մեծագնոյ՝ օծ զոտսն Յիսուսի և հերով իւրով մաքրէր, և թափեաց զիւղն 'ի գլուխ նորա 'ի բազմականին, մինչև լի եղև տունն 'ի հոտոյ իւղոյն։ Յայնժամ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոց էր զնա՝ ասէ. ընդէ՞ր իւղդ այդ ո՛չ վաճառեցաւ երեք հարիւր դենարի և տուաւ աղքատաց։ Զայս ո՛չ վասն աղքատաց ասէր, այլ վասն իւր, զի գող էր, և զարկղն ինքն կրէր։ Յայնժամ ասէ Յիսուս. Թո՛յլ տուք դմա. մի՛ ինչ աշխատ առնէք զկինդ. գործ մի բարի գործեաց դա յիս. յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք. արկանել դորա զիւղդ 'ի մարմին իմ՝ առ 'ի թաղելոյ զիս նըշանակեաց։

## 75. Գաւշտաւարի Յիսուսի յԵրուսաղէմ։

Իբր ինչ եկ Յիսուս 'ի Բեթանիա, 'ի միւսում աւուր 'ի կիւրակէի մօտ 'ի լեառն Ձիթենեաց, առաքեաց զերկուս յաշակերտաց իւրոց 'ի հանդիպակաց գիւղն. և բերին անտի առ նա էշ մի և յաւանակ ընդ նմին. և արկին զնովաւ զհանդերձս իւրեանց՝ և հեծուցին զնա 'ի վերայ նորա ըստ կանխասաց մարգարէութեանն Զաքարիայ։ Եւ մինչդեռ երթայր Յիսուս, տարածանէին զհանդերձս զճանապարհաւն. և մերձ եղեալ 'ի զառ 'ի վայր լերինն Ձիթենեաց՝ սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ու-

ցնծութեամբ օրհնել զՄեսիան վասն ամենայն զօրութեանցն եղելոց, և ասէին. օրհնեալ՝ որ գայ թագաւորութիւն Տեառն. խաղաղութիւն յերկինս, և փառք ՚ի բարձունս։ Իսկ ժողովուրդն, որ առաջի և զկնի երթային՝ փառաւոր առնէին զՄեսիան՝ գոչելով և տարածանելով ըզհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին՝ և ոստս ՚ի ծառոց բերեալ մատուցանէին երկնաւոր թագաւորին՝ կրկնելով զՈվսաննայն, որ է՝ Ո՛վ Տէր կամ Յիսուս փրկեա զմեզ։ Զայն տեսեալ փարիսեցւոց՝ ասէին. ասա աշակերտացդ, զի լռեսցեն։ Ասէ ցնոսա Յիսուս. ասեմ ձեզ. եթէ դոքա լռեսցեն՝ քարինքդ աղաղակեսցեն։ Իբրև մերձեցաւ յԵրուսաղէմ՝ տեսեալ զքաղաքն՝ ելաց ՚ի վերայ նորա, թէ զինչ պաշարելոց է ՚ի թշնամեաց և նեղելոց յամենայն կողմանց մինչև չ՚մնալ քար ՚ի քարի վերայ, փոխանակ զի ոչ ծանեաւ զժամանակ այցելութեան իւրոյ։ Իսկ ՚ի մտանելն նորա յԵրուսաղէմ արքունական փառօք՝ դըղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէին. սա է Ճշմարիտ մարգարէն Յիսուս։ Եւ մտեալ ՚ի տաճարն՝ եհան զամենեսեան, որք վաճառէին և գնէին. անդ մատեան առ նա կոյրք և կաղք և բժշկեաց զնոսա։ Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զսքանչելիսն, զոր արար, և զմանկունսն՝ որք աղաղակէին ՚ի տաճարին. Ովսաննայ, օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան յոյժ։ Բայց Յիսուս անդէն պապանձեցոյց զնոսա ըստ բանի սաղմոսին թէ՝ „ ՚Ի բերանոյ տղայոց և ստնդիացաց կատարեցեր զօրհնութիւն։ ՚Ի նմին երեկոյի առ ահի թշնամեացն Յիսուսի՝ ոչ ոք հրաւիրեաց զնա յընթրիս, նմին իրի գնաց դարձեալ ՚ի Բեթանիա աշակերտօքն հանդերձ, և անդ ագաւ.

### 76. Թզենին ՚ի վերայ ճանապարհին.

Եւ այգուն ՚ի հետևեալ աւուր՝ իբրև դարձաւ անդրէն յԵրուսաղէմ, քաղցեաւ. և տեսեալ թզենի մի ՚ի վե-

րայ Ճանապարհին՝ եկն 'ի նա՝ և ոչինչ եգիտ, բայց միայն տերև. և ասէ՝ մի՛ այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան: Եւ առ ժամայն չորացաւ թզենին: Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան. և ասէ ցնոսա Յիսուս. եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցիք, ասիցէք լերինդ՝ բարձի՛ր և անկի՛ր 'ի ծով, եղիցի. և զամենայն ինչ, զոր և խնդրիցէք յաղօթս հաւատով առնուցուք:

## 77. Առակ չար մշակաց:

Ասէ առակ մի Յիսուս առ ժողովուրդս և ասէ. այր ոմն տնկեաց այգի. և ցանկով պատեաց՝ և ետ զնա ցըմշակս և ինքն գնաց 'ի Ճանապարհ ժամանակս բազումս: Իսկ 'ի ժամանակին առաքեաց առ մշակսն զծառայ, զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշակքն գան հարին զնա և արձակեցին ունայն: Յաւել յղել միւս ևս ծառայ, նոքա զնա ևս գան հարին՝ անարգեցին և առաքեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել, նոքա և զնա վիրաւորեցին և հանին արտաքս: Ապա առաքեաց զորդի իւր: Իբրև տեսին զնա մշակքն, ասեն ընդ միմեանս. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, զի մեր լիցի ժառանգութիւնն. և հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին: Արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. ոչ ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ և տացէ զայգին այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղ 'ի ժամու իւրեանց: 'Ի նմին ժամու կատաղեալ նոցա կամեցան արկանել 'ի նա ձեռս և ըմբռնել, զի գիտացին եթէ առ նոսա ասաց զառակն զայն, բայց երկեան 'ի ժողովրդենէն. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա.

## 78. Առակ հարսանեաց:

Յետ այնորիկ սկսաւ Յիսուս առնել զառակս զայս. նը-

մանեցաւ արքայութիւնն երկնից առն Թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում և առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալս ՚ի հարսանիս, այլ նոքա ոչ կամէին գնալ։ Դարձեալ առաքեաց զայլ ծառայս՝ ասել նոցա, թէ ամենայն ինչ պատրաստ է, եկայք ՚ի հարսանիսս։ Իսկ նոքա յուլացեալք գնացին՝ ոմն ՚ի գործ իւր, ոմն ՚ի վաճառ իւր, այլք Թշնամանեցին զծառայս նորա և սպանին։ Իսկ Թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ. և առաքեաց զօրս և սատակեաց զսպանողսն զայնոսիկ, և ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։ Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիսս, և այնպէս լցաւ հարսանիքն բազմականօք։ Իսկ Թագաւորն մտեալ ետես, զի այր մի չէր զգեցեալ զհանդերձ հարսանեաց. և ասէ ցնա ընկեր, զիարդ մտեր այսր, զի ոչ ունէիր զհանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ։ Յայնժամ հրամայեաց կապել զձեռս և զոտս նորա և հանել ՚ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։

79. Քահանայապետք և Փարիսեցիք փորձեն զՅիսուս վասն տալոյ կայսեր զհարկ.

Եւ ՚ի վաղիւ անդր մինչ ուսուցանէր Յիսուս ՚ի տաճարի անդ, առաքեցին առ նա Քահանայապետք և Փարիսեք զդաւաճանս կեղծաւորեալս Հերովդիանոսօք հանդերձ առ ՚ի որսալ զնա բանիւք և մատնել դատաւորին։ Վասն որոյ հարցին ցնա և ասեն. Վարդապետ՝ գիտեմք, զի ուղիղ խօսիս, և ոչ առնուս աչս. արդ՝ արժան է մեզ հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ Իսկ նորա իմացեալ զխորամանկութիւն նոցա՝ ասէ. ցուցէք ինձ զդահեկան մի, և նոքա ցուցին։ Ասէ. ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Ասեն ցնա՝ կայսեր։ Եւ նա ասէ. երթայք, տուք զկայսերն կայսեր, և

՚զԱստուծոյն՝ Աստուծոյ, և զարմացեալ նոցա ընդ պատասխանին՝ թողին զնա և գնացին։

80. Պապանձեցուցանէ Յիսուս զՍադուկեցիս։

Յայնմ աւուր մատուցեալ ոմանք ՚ի Սադուկեցւոց հարցին զնա և ասեն. Վարդապետ՝ Մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի՝ առցէ զկին նորա եղբայր իւր և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ էին առ մեզ եօթն եղբարք. առաջինն էառ կին և մեռաւ անորդի. էառ զնոյն կին երկրորդն և երրորդն մինչև ցեօթներորդն, և ոչ թողին որդի. յետ ամենեցուն մեռաւ և կինն. արդ՝ ՚ի յարութեան ո՞յր ՚ի նոցանէ լինիցի կին, զի եօթանեքին կալան զնա կին։ Անդէն պապանձեցոյց Յիսուս զնոսա ասելով. որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն, և արանց լինին, իսկ որք արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել. ոչ կանայս առնեն և ոչ մեռանել եւս կարեն. զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ։

81. Ցուցանէ Յիսուս Օրինականին, եթէ ո՛ր պատուիրանն է առաջին։

Փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ պապանձեցոյց զՍադուկեցիսն, ժողովեցան ՚ի միասին. և եհարց մի ոմն ՚ի նոցանէ զնա փորձելով և ասէ. Վարդապետ, ո՞ր պատուիրանն է մեծ յօրէնս։ Եւ Յիսուս ասէ ցնա, սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, այս է մեծն և առաջին պատուիրան։ Եւ երկրորդն նման սմին՝ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ։

82. Տուրք այրի կնոջն։

Յայնժամ հայեցեալ Յիսուս ետես զմեծատունս, որք

արկանէին զտուրս իւրեանց 'ի գանձանակն. եկն և կին մի այրի՝ որ արկ անդր երկուս լումայս, կոչեաց առ ինքն Յիսուս զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ աւելի արկ քան զամենեսին: Քանզի ամենեքին նոքա յաւելորդաց իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ, այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր՝ զոր ունէր, արկ.

## 83. Գուշակութիւն վասն կործանման Երուսաղէմի.

Իբրև ելանէր Յիսուս արտաքս 'ի տաճարէն, ասեն ցնա աշակերտքն, տե՛ս որպիսի են քարինքս, և որպիսի շինուածքս: Պատասխանի ետ Յիսուս, ամէն ասեմ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ զի ոչ մնասցէ քար 'ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի: Յետոյ իբրև գնաց 'ի լեառն Ձիթենեաց, դարձեալ Յիսուս սկսաւ խօսել 'ի վերայ կործանման տաճարին և Երուսաղեմի, թէ հանդերձեալ է կործանիլ ահեղ պատերազմօք և անհնարին նեղութեամբք. և բնակիչքն անցցեն 'ի սուր սուսերի և գերեսցին յամենայն հեթանոս, մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց: Յաւել ասել և զկատարածէ աշխարհի, թէ խաւարեսցի արեգակն և լուսին, և աստեղք երկնից թօթափեսցին և զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նոցա: Եւ ապա ասաց. արթո՛ւն կացէք այսուհետև, և յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ, որ լինելոց է, և կալ առաջի Որդւոյ մարդոյ:

### 84. Առակ տասն կուսանացն։

Դարձեալ ասէ ցնոսա, յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ Հինգն 'ի նոցանէ յիմարք էին, և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերս, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին և ձէթ. և 'ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքին և 'ի քուն մտին։ Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ. ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան իմաստունքն և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցնոսա. տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերք մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք 'ի վաճառականս և գնեցէք. Իբրև. նոքա գնային գնել, եկն փեսայն. և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռն։ Յետոյ գան յիմար կուսանքն և ասեն. տէր, տէր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ գիտեմ զձեզ։ Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն։

### 85. Վարդապետութիւնն Յիսուսի վասն վերջին դատաստանին։

Յաւել Յիսուս ասել և զխորհրդաւորութիւն վերջին դատաստանին. յորժամ՝ ասէ, եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց դատել զաշխարհ, և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ՝ որ մեկնէ զօդիս յայծեաց, և կացուսցէ զօդիս ընդ աջմէ, և զայծիս 'ի ձախմէ։ Եւ ասիցէ Թագաւորն ցաջակողմեանսն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ, և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և արբու-

ցիք ինձ ։ Յայնժամ ասասցեն նմա արդարքն. Տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ, և կերակրեցաք. կամ ծարաւի՝ և արբուցաք։ Պատասխանի տացէ Թագաւորն և ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. որովհետև արարիք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, ինձ արարիք։ Ապա ասասցէ ցձախակողմեանսն. երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և ոչ արբուցիք զիս։ Յայնժամ ասիցեն և նոքա. Տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ, կամ ծարաւի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Եւ նա պատասխանի տացէ նոցա և ասասցէ. որովհետև ոչ արարիք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարիք։ Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ՚ի կեանս յաւիտենականս։ Իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր. գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և Որդի մարդոյ մատնի ՚ի խաչ ելանել։

## 86. Մատնութիւնն Յիսուսի։

Յառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց Յիսուս, եթէ հասեալ է ժամանակ փոխելոյ նորա յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն՝ որք յաշխարհի աստ էին. և ապա յանձն արար զնոսա Հօրն երկնաւորի։ Եւ ՚ի նմին աւուր եղև ժողով մեծ ՚ի սրահի մեծի քահանայապետին Կայիափայ, ուր ժողովեալ էին Քահանայապետք և Դպիրք, Իշխանք և Ծերք ժողովրդեանն։ Այս ժողով անդէն վճռեաց սպանանել զՅիսուս, բայց նոքա տակաւին երկնչէին ՚ի ժողովրդենէն, նմին իրի և ասէին. մի՛ ՚ի տօնի աստ՝ զի մի՛ խռովութիւն ինչ լինիցի ՚ի ժողովրդեանն. և խնդրէին պարապ, զի կալցեն զնա։ Եւ իբրև մերձեցաւ տօն բաղարջակերացն, եհաս և ժամ կատարելոյ ամենայն գրելոցն։ Բայց չորս աւուրբք յառաջ ևմուտ սատանայ յաշակերտն

յոյն կոչեցեալ Յուդա Իսկարիովտացի․ որ ապիրատ
խորհրդով հարեալ զագահութեամբ՝ գնաց եդ բանս ընդ
Քահանայապետսն, ը̄ Դպիրս և ը̄ Իշխանս ժողովրդեանն,
զի մատնեսցէ զնա նոցա։ Իսկ նոքա իբրև լուան, խնդա-
ցին յոյժ․ և խոստացեալ կշռեցին և ետուն նմա զերեսուն
արծաթի։ Նա յանձն էառ, և խնդրէր պարապ մատնել
զնա նոցա մեկուսի յամբոխէ անտի։

## 87. Ընթրիք եւ հաստատութիւն խորհրդոյ Պատարագին։

Եւ յաւուրն առաջնում բաղարջակերաց՝ յորում օրէն
էր զենուլ զպասեքն, այն ինչ Յիսուս էր 'ի լերանն Ձի-
թենեաց՝ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս 'ի քաղաք
անդր պատրաստել զպասեքն, զի ուտիցեն 'ի միասին ըստ
օրինաց։ Իբրև հարցին նոքա՝ թէ ուր պատրաստեսցուք ըզ-
զատիկն, ասէ Յիսուս․ ահա 'ի մտանել ձեր 'ի քաղաքն
պատահեսցի ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ, երթի-
ջիք զհետ նորա 'ի տունն․ և նա ցուցցէ ձեզ վերնատուն
մի մեծ զարդարեալ, և անդ պատրաստեսջիք․ Եւ իբրև ժամ
եղև, եկն անդր Յիսուս, բազմեցաւ ընդ նոսա և ասէ․ ցան-
կանալով ցանկացայ ուտել զայս պասեքս ընդ ձեզ յառաջ
քան զչարչարանս իմ։ Մինչդեռ ուտէին, էառ Յիսուս
'ի ձեռն հաց, օրհնեաց, մանրեաց և ետ աշակերտացն ա-
սելով՝ առէք, կերայք, այս է մարմին իմ․ որ վասն բազ-
մաց տուեալ։ Նոյնպէս առեալ բաժակ գոհացաւ, ետ
նոցա և ասէ․ արբէք 'ի դմանէ ամենեքին․ զի այդ է արիւն
իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թո-
ղութիւն մեղաց, զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Ապա
ասէ․ այսուհետև ոչ ևս արբից 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն
յայն, յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան
Հօր իմոյ։

## 88. Լուացումն ոտից։

Գիտաց Յիսուս՝ եթէ ժամ է կատարել զամենայն և գնալ առ Հայր. յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձս. և առեալ զղենջակ մի՝ սփածաւ. և ապա արկ ջուր ՚ի կոնք և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր ղենջակաւն։ Իբրև եկն առ Պետրոս՝ նա հրաժարէր ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս, եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիցիս ընդ իս մասն։ Եւ լուացեալ զոտս ամենեցուն՝ էառ զհանդերձս իւր՝ դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա։ Գիտէ՞ք՝ զինչ արարի ձեզ. ահա ես Տէրս և Վարդապետս լուացի զոտս ձեր, ապա և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։ Օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, նոյնպէս և դուք առնիջիք ։ Եւ դուք էք, որ ցանդ կայիք ընդ իս ՚ի փորձութիւնս իմ. Եւ ես ուխտեմ ձեզ, որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն. զի ուտիցէք և ըմպիցէք ՚ի սեղան իմ յարքայութեան իմում, և նստիցիք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգս Իսրայելի։

## 89. Յիսուս յայտնէ զանուն մատնչին իւրոյ, և տայ նմա զխրատ ապաշխարութեան .

Զայս իբրև ասաց Յիսուս, խռովեցաւ հոգի իւր. վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք՝ թէ ով արդեօք իցէ։ Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէր Յիսուս։ Ակնարկէ նմա Պետրոս հարցանել՝ թէ ով իցէ նա ։ Եւ նորա (Յովհաննու) անկեալ զլանջօքն Յիսուսի՝ ասէ ցնա. Տէր, ով է ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ . Նա է՝ որում ես թացից զպատառն և տաց։ Ինձ պարտ է կատարել զկամս Հօր իմոյ, բայց վայ մարդոյն այնմիկ, յոյր

ձեռն մատնիցի Որդի մարդոյ։ Ապա թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Իսկարիովտացւոյ, որ յետ պատառոյն՝ գլխովին զգեցեալ զսատանայ՝ զրկեցաւ յԱստուածային շնորհաց և ասէ ցնա. արդ՝ զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի։ Այլ զայս բան ոչ ոք իմացաւ ՚ի բազմականաց անտի, թէ առ ինչ ասաց ցնա. զի համարէին՝ թէ ասաց նմա գնել զինչ պիտոյ էր ՚ի տօնին և վասն աղքատաց։ Յայնժամ Յուդա ել և գնաց առ Քահանայապետս և Փարիսեցիս առ ՚ի մատնել զՅիսուս, և էր գիշեր։

90. Յիսուս աւանդէ աշակերտաց իւրոց զՊատուիրան նոր իւր։

Այն ինչ ել Յուդա արտաքս՝ սկսաւ ասել Յիսուս. այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ. և Աստուած փառաւորեցաւ ՚ի նմա։ Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ՚ի նմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ Որդեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս. զի ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ։ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս. որպէս ես զձեզ սիրեցի։ Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր, յո՞ երթաս. պատասխանի ետ Յիսուս. ուր ես երթամ՝ դու ոչ կարես գալ այժմ զկնի իմ, բայց յետոյ եկեսցես։ Ասէ ցնա Պետրոս. Տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ՚ի վերայ քո։ Պատասխանի ետ Յիսուս. զա՞նձն քո դիցես ՚ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չէ՛ լիցի հաւու խօսել, մինչ դու երիցս ուրասցիս զիս։ Ապա ասէ Յիսուս ցաշակերտսն. եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք. և ես աղաչեցից զՀայր և այլ մխիթարիչ տացէ ձեզ՝ զի ընդ ձեզ բնակեսցէ ՚ի յաւիտեան. զՀոգին Ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա.

բայց դուք ճանաչէք զնա՝ և ընդ ձեզ եղիցի։ Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ Փոքր մ՚ևս ևս՝ և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում՝ և դուք յիս՝ և ես 'ի ձեզ։ Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր՝ և մի՛ զանգիտեսցեն։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Ո՛չ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ, զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն՝ զոր լուայ 'ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։ Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է. զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։

91. Յիսուս աղօթէ առ Հայր վասն իւր։

Զայս իբրև խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հա՛յր՝ հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ։ Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ. զի ամենայնի՝ զոր ետուր նմա, տացէ զկեանս յաւիտենականս։ Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի, զոր ետուր ինձ՝ զի արարից։ Եւ այժմ փառաւորեա՛ զիս Հա՛յր՝ առ 'ի քէն փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ 'ի քէն։

### 92. Յիսուս աղօթէ առ Հայր վասն աշակերտաց իւրոց։

Հա՛յր՝ յայտնեցի զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր զնոսա. և զբանն քո պահեցին։ Զի զբանն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ, թէ առ 'ի քէն ելի, և հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս։ Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ, զորս ետուրն ինձ. Հա՛յր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք։ Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանդ ճշմարտութիւն է։ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի լիցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ լիցեն, զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս։

### 93. Յիսուս աղօթէ 'ի պարտիզին Գեթսեմանի։

Զայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի, և եմուտ 'ի գիւղն Գեթսեմանի. և թողեալ անդ զաշակերտսն՝ էառ ընդ իւր զՊետրոս, զՅակոբոս և զՅովհաննէս և եմուտ 'ի պարտէզ մի. և էր ժամ չորրորդ։ Յայնժամ սկսաւ տրտմիլ և հոգալ վասն չարչարանացն. և ասէ ցաշակերտսն՝ տրտում է անձն իմ մինչև ցմահ. կացէք աստ և հսկեցէք ընդ իս։ Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր, եկաց յաղօթս ասելով Հայր իմ, եթէ հնա՛ր է անցցէ յինէն բաժակ չարչարանաց իմոց, բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Դարձաւ անտի առ աշակերտսն և եգիտ զնոսա 'ի քուն. և ասէ ցՊետրոս. այդպէս ո՛չ կարացիք ժամ մի արթուն կալ ընդ իս. Արդ՝ արթո՛ւն կացէք և աղօ՛թս արարէք, զի մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն։ Դարձեալ երկրորդ և երրորդ անգամ չո-

դաւ և եկաց յաղօթս և զնոյն բան ասաց. և թոյլ ետ անձին վշտանալ 'ի տրտմութենէ, մինչև առաքեցաւ յերկնից հրեշտակ զօրացուցանել զնա։ Եւ 'ի տագնապէն հոսէին 'ի նմանէ քրտունքն իբրև զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն, հեղեալ յերկիր։ Ապա յարուցեալ յաղօթիցն եկն միւսանգամ առ աշակերտսն և եգիտ զնոսա 'ի քուն 'ի տրտմութենէն, և ասէ ցնոսա. Ննջեցէք այսուհետև և հանգերուք, զի ահա եհաս ժամ մատնել Որդւոյ մարդոյ 'ի ձեռս մեղաւորաց։

94. Յիսուս կապեալ ածի նախ առ Աննա, և ապա առ Կայիափա։

Գիտէր մատնիչն Յուդա զտեղին, ուր բազում անգամ ժողովեալ էր Յիսուս աշակերտօքն հանդերձ։ Ապա 'ի կէս գիշերի առեալ ընդ իւր զգունդն, և 'ի Քահանայապետից և 'ի փարիսեցւոց սպասաւորս՝ գայ անդր ջահիւք, լապտերօք և զինուք. և մերձեցեալ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա կալարուք։ Ասէ ցնա Յիսուս. Յուդա, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ։ Աշակերտացն այլ յայլմէ եղեալ՝ խնդրէին հրաման 'ի փրկչէն հարկանել զնոսա և սպանանել սրով, և Պետրոս, քանզի ունէր սուր՝ ձգեաց զնա, եհար զՄաղքոս ծառայ Քահանայապետին, և 'ի բաց եհան զաջոյ ունկն նորա։ Բայց Յիսուս յանդիմանեալ զկեժ Պետրոսի՝ բժշկեաց անդէն զունկն Մաղքոսի։ Եւ իբրև ել անմեհեր ընդ առաջ ամբոխին և հարցանէր՝ թէ զո՞ խնդրէք, և նոքա ասացին՝ զՅիսուս Նազովրեցի. իբրև ասաց՝ թէ ես եմ. անդէն նոքա յետս յետս չոգան և զարկան զգետնի։ Յայնժամ ասէ Յիսուս ցեկեալս 'ի վերայ իւր ցՔահանայապետսն և ցիշխանս տաճարին և ցԾերս. իբրև 'ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք. Հանապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին և ոչ ձգեցէք ձեռս յիս, այլ այս

է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի։ Իսկ զունդն, հազարապետն և սպասաւորք Հրէից կալան զՅիսուս և կապեցին, և ածին նախ առ Աննա քահանայապետ, որ էր աներ Կայիափայի։ Նա եհարց Քահանայապետն զՅիսուս վասն աշակերտացն և վասն վարդապետութեան նորա։ Պատասխանի ետ նմա Յիսուս. ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի և ուսուցի 'ի ժողովրդեանն և 'ի տաճարի անդ։ Զի՞ հարցանես զիս, հա՛րց զլսողսն, որք լուանն՝ թէ զի՛նչ խօսեցայ ընդ նոսա։ Իբրև նա զայս ասաց, մի ոմն 'ի սպասաւորացն անտի ած ապտակ Յիսուսի և ասէ ցնա. այդպէս պատասխանի տաս Քահանայապետիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին, իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս։ Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա, որ էր Քահանայապետ տարւոյն այնորիկ։

## 95. Դատապարտութիւն Յիսուսի։

Յետ այնորիկ Քահանայապետքն և ամենայն Ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զնմանէ, զի սպանցեն զնա, և ոչ գտանէին 'ի բազմաց սուտ վկայից մատուցելոց։ Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք ասէին՝ թէ սա ասէր, կարող եմ քակել զտաճարս զայս և զերիս աւուրս շինել։ Բայց Քահանայապետն Կայիափա ստիպէր զՅիսուս տալ պատասխանի ամբաստանութեանցն, որպէս զի բանս որսացեալ 'ի բերանոյ նորա պարտաւորեսցէ զնա։ Իբրև ետես՝ եթէ Յիսուս իբրև զգառն՝ լուռ և եթ կայ, յարուցեալ՝ երդմամբ հարցանէր ցնա ասելով. երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։ Պատասխանի ետ Յիսուս, դու ասացեր։ Բայց ասեմ ձեզ. յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան՝ և եկեալ ընդ ամպս երկնից։ Զայն լուեալ Քահանայապետին՝ պատառեաց

զհանդերձս իւր՝ և ասէ, հայհոյեաց. զի՞ եւս պիտոյ են մեզ_ վկայք. և ամենեքին վկայեցին՝ թէ մահապարտ է, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար: Յայնժամ ետուն զնա 'ի ձեռս զին_ ուորաց, որոց առեալ զնա 'ի մէջ իւրեանց՝ չարչարեցին զնա զգիշերն ողջոյն մինչև ցառաւօտ, զի նախատէին զնա և թք_ քանէին ընդ երեսս նորա, և կապտականօք ծաղր առնէին. և ծածկեալ զերեսս նորա՝ ապտակս հանէին նմա ասելով. մարգարէա՛ց մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է այն, որ եհար զքեզ: 'Ի նմին ժամու Պետրոս և Յովհաննէս մտեալ էին զհետ Յիսուսի յապարանս Քահանայապետին: Ընդ Պետրոս հարցեալ 'ի սպասաւորացն և յայլոց, թէ և դու յաշակեր_ տաց անտի Յիսուսի՞ իցես, երիցս ուրացաւ՝ թէ չեմ 'ի նո_ ցանէ. և առ ժամայն հաւ խօսեցաւ: Դարձաւ Յիսուս և հայեցաւ 'ի Պետրոս, և նա անդէն յիշեաց զբան նորա, և ելեալ արտաքս յապարանիցն՝ ելաց դառնապէս: Իսկ ա_ նօրէնն Յուդա փոխանակ 'ի զեղջ գալոյ՝ անկաւ յաղե_ տալի յուսահատութիւն, և տարեալ արկ առաջի Քահա_ նայապետից զարծաթն, զոր առեալ էր 'ի նոցանէ 'ի վարձ մատնութեան, և գնաց արկ խեղդ ընդ պարանոցն, և կո_ րեաւ 'ի յաւիտենական կորուստ:

96. զՅիսուս ածեն առ Պիղատոս, նա տայ տանել առ Հերովդէս.

Իսկ երբև այգ եղև, վերստին խորհուրդ արարին ամե_ նայն Քահանայապետք և Ծերք ժողովրդեանն սպանանել զՅիսուս: Ապա երբ ածին զնա առ Պիղատոս որպէս մահա_ պարտ և սկսան չարախօս լինել զնմանէ՝ ասելով. գտաք զդա, զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր 'ի տալոյ հարկս Կայսեր՝ համարեալ զինքն թագաւոր Հրէից: Իսկ Պիղատոս քննեալ՝ վնաս ինչ ոչ եգիտ 'ի նմա, ապա տեղեկանալով՝ թէ յիշ_ խանուէ Հերովդի է, ետ տանել զնա առ Հերովդէս, որ յԵր_ ուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ. Հերովդէս երբև ետես զՅիսուս՝ ուրախ եղև. զի ցանկայր 'ի բազում ժամանա_

կայ տեսանել զնա, քանզի բազում ինչ լուեալ էր զնը-մանէ, և ակն ունէր նշան ինչ տեսանել։ Հարցանէր զնա բանիւք բազմօք, այլ Յիսուս ոչ ինչ ետ նմա պատասխանի։ Կային անդ Քահանայապետք և Դպիրք և պնդագոյնս չա-րախօսէին զնմանէ։ Արհամարհեաց զնա և Հերովդէս հան-դերձ իւրովք զօրականօքն, և այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս և ետ տանել անդրէն առ Պիղատոս։

## 97. Չարչարանք Յիսուսի։

Պիղատոս տեսեալ թէ և ոչ Հերովդէս գիտաց գտանել զնա որպէս մահապարտ, երկեաւ յայժ հաւանել Հրէից. մանաւանդ զի և կինն իւր խաւսեալ յանուրջս՝ աղաչէր զնա արձակել զՅիսուս։ Վասն որոյ սկսաւ հնարս հնարել ա-զատութեան նորա, և ասէ ցՔահանայապետս. ածէք, մատու-ցէք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեան. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և վնաս ինչ ոչ գտի 'ի սմա. այլ և ոչ Հերովդէս։ Արդ՝ ոչ ինչ մահու արժանի գործեալ է դորա, խրատեցից զդա և արձակեցից. քանզի ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեանն զկա-պեալ մի, զոր խնդրեանք կամէին։ Ունէին յայնժամ կա-պեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա։ Իբրև ժողովեցան ամենեքեան, ասէ ցնոսա Պիղատոս. զո՞ կամիք, զի արձակեցից ձեզ յերկուց աստի. և նոքա յու-զեալք 'ի Քահանայապետից՝ աղաղակեցին արձակել նոցա զԲարաբբա, իսկ զՅիսուս 'ի խաչ հանել։ Իբրև ոչ կա-րաց Պիղատոս հաճել զմիտս ժողովրդոց առ յազատել զՅիսուս, գան հարեալ զնա ետ 'ի ձեռս զինուորաց ի-րոց չարչարել զնա ըստ հաճոյս։ Յայնժամ զինուորքն ա-ռին զՅիսուս յապարանս. և ժողովեցին 'ի վերայ նորա զամենայն զգունդն։ Մերկացին զնա և արկին զնովաւ քղ-ամիդ կարմիր և ծիրանի։ Եւ բոլորեալ պսակ 'ի փշոյ՝ ե-դին 'ի գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին նորա. 'ի ծունր

իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. ողջ լեր, Թագաւոր Հրէից, և Թքեալ 'ի նա առնուին զեղէգն և ծեծէին զգլուխ նորա։ Յետ այսր ամենայնի տեսեալ Պիղատոսի, թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, մանաւանդ զի երկեաւ յաղաղակէ բազմութեանն։ Թէ չես բարեկամ Կայսեր, եթէ զդա արձակես. առեալ ջուր՝ լուաց զձեռս իւր առաջի ժողովրդեանն և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք։ Պատասխանի ետ ժողովուրդն և ասէ. արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց։ Զայն լուեալ Պիղատոս, արձակեաց նոցա զԲարաբբայն, և զՅիսուս ետ 'ի ձեռս նոցա, զի խաչեսցի։ Յայնժամ զինուորքն մերկացուցին 'ի Յիսուսէ զբղամիդն և զծիրանին. և ագուցին նմա զիւր Հանդերձս և տարան զնա 'ի խաչ հանել։ Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրենացի՝ անուն Սիմոն. զնա կալան պահակ, զի բարձցէ զխաչն նորա։ Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժողովրդեանն և կանանց, որք կոծէին և աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. դստերք Երուսաղեմի՝ մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց։ Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի ամլոց և որովայնից՝ որք ոչ ծնան, և ստեանց, որք ոչ դիեցուցին։ Յայնժամ ասիցեն լերանց՝ թէ անկերուք 'ի վերայ մեր. և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ։

## 98. Խաչելութիւն Յիսուսի։

Իբրև չոգան 'ի տեղին անուանեալն Գողգոթա, որ է տեղի կառափելոյ, ետուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և իբրև ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ Եւ հանին զնա 'ի խաչ։ Ածին և այլ երկուս չարագործս սպանանել ընդ նմա. վասն որոյ և զմին 'ի նոցանէ ընդ աջմէ Յիսուսի, և զմիւսն 'ի ձախմէ խաչեցին. որով լցաւ Գիրն՝ որ

ասէ՝ թէ ընդ անօրէնս համարեցաւ։ Յայնժամ ասէ Յիսուս. Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ո՛չ գիտեն՝ զինչ գործեն։ Գըրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ 'ի վերայ խաչին. և էր գրեալ՝ Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից։ Եւ յասելն Քահանայապետից ցՊիղատոս թէ՝ մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից. պատասխանեաց՝ զոր ինչ գրեցի՝ գրեցի։ Իսկ զինուորքն իբրև հանին զնա 'ի խաչ, առին զհանդերձս նորա և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի 'ի վերուստ փորանկեալ ամենևին. մի՛՝ ասեն ցմիմեանս, պատառեսցուք, այլ արկցուք վիճակս 'ի վերայ դորա՝ ում և ելցէ. զի լցցի Գիրն, որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին։ Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա. շարժէին զգլուխս իւրեանց և ասէին. վա՜հ՝ որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցո՛ զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ, էջ 'ի խաչէդ. Նոյնպէս և Քահանայապետքն ծաղրէին հանդերձ Դպրօքն և Ծերովք և ասէին. զայլս ապրեցոյց, զինքն ո՛չ կարէ ապրեցուցանել. եթէ Թագաւոր է Իսրայելի, իջցէ այժմ 'ի խաչէդ և հաւատասցուք դմա։ Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի զդա։ Իսկ մի ոմն 'ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա և ասէր. ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա՛ զանձն քո և զմեզ։ Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա և ասէ. չերկնչիս դու յԱստուծոյ, զի 'ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի՝ զի արժանի որոց գործեցաքն, առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ո՛չ գործեաց։ Եւ ապա ասէ ցՅիսուս. յիշեա՛ զիս Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։ Եւ էր իբրև վեցերորդ ժամ, և խաւար եղև 'ի վերայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամն։ Եւ կային առ խաչին Յիսուսի մայր նորա և քոյր

մօր նորա Մարիամ Կղէովպայ և Մարիամ Մագդաղե-նացի։ Յիսուս իբրև ետես զմայրն և զաշակերտն, զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն. կին դու՛ ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն, ահա մայր քո. և յայնմ ժամանակէ հետէ առ աշակերտն զնա էառ իւր։

## 99. Մահն նորա։

Ապա զկնի ժամանն կոչեաց Յիսուս 'ի ձայն մեծ և ասէ. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Յետ այնորիկ իբրև գիտաց Յիսուս՝ թէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի Գիրն, ասէ՝ ծարաւի եմ։ Եւ անդ կայր աման ինչ լի քացախով, և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ-լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան նորա։ Իբրև էառ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է։ Եւ կարդաց Յիսուս 'ի ձայն մեծ և ասէ. Հայր՝ 'ի ձեռս քո աւանդեմ ըզհոգի իմ. զայս իբրև ասաց, եհան զոգի։ Եւ ահա վարագոյր տաճարին ճեղաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչև 'ի վայր, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, և գերեզմանք բացան. և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան, և ելեալ 'ի գերեզմանաց յետ յարութեան նորա՝ մտին 'ի քաղաքն սուրբ և երևեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն և որք ընմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն, երկեան յոյժ և ասեն. արդարև Աստուծոյ Որդի էր սա։ Եւ ամենայն ժողովուրդքն՝ որք եկեալ էին և տեսանէին զտեսիլն զայն և զգործ, բաղխէին զկուրծս և դառնային։ Կային ամենայն ծանօթք նորա 'ի հեռաստանէ և կանայք, որք եկեալ էին զհետ նորա 'ի Գալիլեէ և ցաւակցէին նմա, յորս էր Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբեայ և այլք։ Իսկ Հրէայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն 'ի խաչին ագանիցին մարմինքն մինչև

ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ․ աղաչեցին զՊիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նոցա՝ և բարձցին ։ Եկին զինուորքն, և առաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ՚ի խաչին ելեալ էր։ Բայց իբրև եկին առ Յիսուս և տեսին, զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա ։ Այլ մի ոմն ՚ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողն նորա, և ել վաղվաղակի արիւն և ջուր։ Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութիւն նորա, և նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք։ Այս եղև՝ զի լցցի Գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի։

## 100. Թաղումն նորա ։

Եւ իբրև երեկոյ եղև․ քանզի ուրբաթ էր, որ ՚ի շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ՝ որ Յարեմաթեայն էր․ այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս և խնդրեաց զմարմինն Յիսուսի․ Եւ Պիղատոս զարմացաւ՝ թէ այնչափ վաղ մեռաւ․ ապա իբրև ստուգեաց ՚ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։ Եկն և Նիկոդիմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ՚ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէ՝ իբրև լտերս հարիւր։ Եւ առեալ զմարմինն Յովսէփ պատեաց սուրբ կտաւով և եդ ՚ի նոր գերեզմանի, զոր փորեաց ՚ի վիմի․ և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց ։ Անդ էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամն նստէին հանդէպ գերեզմանին։ Եւ ՚ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան Քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս և ասեն ․ Տէ՛ր՝ յիշեցաք, զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։ Արդ՝ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ

յարեաւ 'ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս՝ ունիք զօրականս. երթա՛յք զգուշացարո՛ւք որպէս և գիտէք։ Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին և կնքեցին զվէմն համդերձ զօրականօքն։

## 101. Յարութիւն նորա։

Եւ երբեւ անց շաբաթն Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակոբայ և Սողոմէ չոքան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա։ Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արևագալն և ասէին ընդ միմեանս. Ո՞վ թաւալեսցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին։ Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի և նստէր 'ի վերայ նորա։ Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն. և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն և եղեն իբրև զմեռեալս։ Ասէ հրեշտակն ցկանայսն. մի՛ երկնչիք դուք, գիտեմ, զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն. եկա՛յք տեսէք զտեղին՝ ուր կայր։ Եւ վաղվաղակի երթա՛յք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ, և ահա՛ յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. Եւ երբեւ լուան՝ ելին և փախեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին, և ո՛չ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։ Եւ յիշեցին զբանն նորա և դարձան պատմեցին զայս մետասանիցն և այլոցն ամենեցուն։ Եւ էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակոբայ և այլք ընդ նոսա, որք պատմեցին զայս Առաքելոցն։ Եւ երևեցան առաջի նոցա շաղփաղփաթիւն բանք նոցա և չ՛հաւատային նոցա։ Եւ Պետրոս և միւս աշակերտն և գային 'ի գերեզմանն, ընթանային երկոքեան 'ի միասին, և միւս աշակերտն յառաջեաց, ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս և եկն նախ 'ի գերեզմանն, և խո-

նարհեալ տեսանէ, զի կային անդ կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ: Եկն և Սիմոն Պետրոս, որ գայր զկնի նորա, եմուտ 'ի գերեզմանն և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ, և վարշամակն՝ որ էր 'ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն: Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւատաց. զի չև ևս գիտէին զԳիրս՝ թէ պարտ նմա 'ի մեռելոց յառնել. և չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն: Իբրև նոքա գնացին, ահա ոմանք 'ի զօրականացն եկին 'ի քաղաքն, և պատմեցին Քահանայապետիցն զամենայն, որ ինչ եղեն: Եւ նոքա ժողովեալ հանդերձ Ծերովքն խորհուրդ առեալ արծաթ յոյժ ետուն զօրականացն, և ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա, մինչ մեք 'ի քուն էաք: Եւ եթէ լուր լինի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա և զձեզ անհոգս արասցուք: Եւ նոցա առեալ զարծաթն՝ արարին որպէս ուսանն:

### 102. Յիսուս Քրիստոս յետ յարութեան իւրոյ երեւի Մարիամու Մագդաղենացւոյ:

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր, խոնարհեցաւ 'ի գերեզմանն: Եւ տեսանէ երկուս Հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարէց և մի յոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի: Եւ նոքա ասեն ցնա՝ կին դու, զի՞ լաս. ասէ ցնոսա, զի բարձին զտէրն իմ 'ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա: Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս՝ զի կայր. և ոչ գիտէր՝ թէ Յիսուս իցէ. Ասէ ցնա Յիսուս կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես. նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա տէր՝ եթէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ, ո՞ւր եդեր զնա. զի ես առից զնա: Ասէ ցնա Յիսուս, Մա՛րիամ, և նա դարձաւ և ասէ ցնա եբրայեցերէն, ռա՛բբունի, որ

Թարգմանի վարդապետ: Ասէ ցնա Յիսուս. մի՛ մերձենար յիս, զի չև ևս ելեալ եմ առ Հայրն իմ, այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա՛ ցնոսա. ելանեմ ես առ Հայրն իմ՝ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ՝ և Աստուած ձեր: Գնայ Մարիամ Մագդաղենացի՝ և պատմէ աշակերտացն, եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա:

103. Յիսուս յարուցեալ երևի երկուց աշակերտաց իւրոց 'ի ճանապարհին:

Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթային 'ի նմին աւուր 'ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ վաթսուն ասպարիզաւ. և էր անուն նորա Էմմաուս: Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց: Եւ եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճելն՝ մերձեցաւ Յիսուս և երթայր ընդ նոսա. և նոցա աչք կալեալ էին առ 'ի չծանաչելոյ զնա: Եւ ասէ ցնոսա Յիսուս. զի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս, մինչդեռ գնայքդ, և տրտմեալ էք: Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ, որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա. դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ո՛չ գիտացեր զինչ գործեցաւ 'ի նմա յաւուրսս յայսոսիկ: Եւ ասէ ցնոսա՝ զի՞նչ. և նոքա ասեն՝ զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղև այր մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն: Որպէս մատնեցին զնա Քահանայապետքն և իշխանքն մեր 'ի դատաստան մահու և հանին զնա 'ի խաչ: Մեք ակն ունէաք, թէ նա է՝ որ փրկելոց էր զԻսրայէլ, այլ և հանդերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է, յորմէ հետէ այն գործեցաւ: Այլ և կանայք ոմանք 'ի մէնջ զարմացուցին զմեզ. որք կանխեալ ընդ առաւօտն՝ չոգան 'ի գերեզմանն, և ո՛չ գտին զմարմին նորա, եկին և ասեն. թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ կենդանի է: Եւ գնացին ոմանք 'ի մէնջ 'ի գերեզմանն, և գտին նոյնպէս՝ որպէս և կանայքն աս-

ցին, բայց զնա ոչ տեսին։ Եւ նա ասէ ցնոսա. ո՛վ անմիտք և հեղգասիրտք 'ի հաւատալ յամենայնի, զոր խօսեցան Մարգարէքն, Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի և մտանել 'ի փառս իւր։ Եւ սկսեալ 'ի Մովսէսէ և յամենայն Մարգարէից՝ մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն Գիրս գրեալ է զնմանէ։ Իբրև մերձեցան 'ի գեօղն՝ յոր երթային, և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ։ Եւ բռնադատեցին զնա և ասեն. առ մեզ ագիր, զի ընդ երեկս է. և տարաժամեալ է օրս. և եմուտ ագանել ընդ նոսա։ Եւ եղև 'ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ և ետ նոցա, և նոցա բացան աչք, և ծանեան զնա. և նա եղև 'ի նոցանէ աներևոյթ։ Եւ նոքա ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ և սիրտք մեր ճինչէին 'ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն, և որպէս բանայր մեզ զԳիրս։ Եւ յարուցեալ նոյնժամայն՝ դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զմետասանսն և զորս ընդ նոսա էին, և ասեն թէ արդարև յարեաւ Տէր և երևեցաւ Սիմովնի։ Եւ նոքա պատմէին զայն՝ որ զճանապարհայնն. և թէ զիա՛րդ ետ ծանօթս նոցա 'ի բեկանել հացին։

104. Յիսուս Քրիստոս երևի երկոտասանիցն յԵրուսաղէմ։

Մինչդեռ նոքա զայն խօսէին, Յիսուս եկաց 'ի մէջ նոցա՝ և ասէ. խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ զահի հարեալ երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել։ Ասէ ցնոսա Յիսուս. զի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն 'ի սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ։ Եւ մինչդեռ տակաւին չհաւատային 'ի խնդութենէն՝ և զարմացեալ էին, ասէ ցնոսա. ունի՞ք ինչ կերակուր աստ։ Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն և խորիսխ մեղու։ Եւ առ Յիսուս, եկեր առաջի նոցա, և ըդ-

մնացորդսն ետ նոցա։ Յետ այնորիկ ասէ ցնոսա. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. և փչեաց 'ի նոսա և ասէ. առէք Հոգի սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։ Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն անուանեալ երկուորեակն՝ ոչ էր ընդ նոսա, յորժամ եկն Յիսուս։ Ասէին ցնա այլ աշակերտքն, թէ տեսաք զՏէր, այլ նա՝ չհաւատամ, ասէր. մինչև ոչ տեսից 'ի ձեռս նորա զնշան բևեռացն. և մխեցից զձեռս իմ 'ի կողս նորա։ Եւ յետ ութ աւուրց կրկին վերստին ժողովեալ էին աշակերտքն և Թովմաս ընդ նոսա, գայ Յիսուս դրօքն փակելովք. և եկաց 'ի մէջ, և ողջոյն տուեալ նոցա՝ ասէ ցԹովմաս. բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ և զկողս. և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա, Տէր իմ՝ և Աստուած իմ։ Ասէ ցնա Յիսուս՝ այդ զի տեսերդ զիս և հաւատացեր. երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն։

## 105. Յիսուս երևի առ ծովեզերբն Տիբերեայ։

Յետ այնորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ այսպէս։ Էին 'ի միասին Սիմոն Պետրոս և Թովմաս և Նաթանայէլ՝ որ 'ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտացն անտի երկու։ Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս, երթամ ձուկն որսալ. ասեն ցնա, գամք և մեք ընդ քեզ. գնացին և մտին 'ի նաւ. և յայնմ գիշերի կալան և ոչինչ։ Իբրև այգ եղև, կայր Յիսուս յեզր ծովուն. բայց ոչ ծանեան աշակերտքն, թէ Յիսուս իցէ։ Ասէ ցնոսա Յիսուս. մանկունք, միթէ ունիցիք ինչ ուտելոյ. պատասխանի ետուն և ասեն ցնա՝ ոչ։ Ասէ ցնոսա, արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք։ Արկին, և ոչ կարէին ձգել 'ի բազմութենէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն, զոր սի-

ընէր Յիսուս՝ զՊետրոս. Տէր է այն: Սիմոն Պետրոս լուեալ, թէ Տէր է. արկաւ զիւրև զխածանելին, քանզի մերկ էր. և ընկէց զինքն ՚ի ծովն: Զայս երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ ՚ի մեռելոց:

### 106. Աշակերտք Յիսուսի գնան ՚ի Գալիլեա, ուր ժամադիր եղև նոցա Յիսուս:

Յետ այնորիկ մետասան Աշակերտքն գնացին ՚ի Գալիլեա ՚ի լեառնն, ուր ժամադիր եղև նոցա Յիսուս. իբրև տեսին զնա՝ երկիրպագին նմա, և ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ. Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի: Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ. և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի: Նշանք այսոքիկ, որք հաւատան, երթիցեն զհետ այնոցիկ, յանուն իմ դևս հանիցեն. լեզուս խօսեսցին. ՚ի ձեռս իւրեանց օձս բարձցեն, և եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ. ՚ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցին:

### 107. Համբարձումն Յիսուսի:

Յետ քառասուն աւուրց եհան Յիսուս զաշակերտս իւր ՚ի Բեթանիա մերձ ՚ի լեառն Ձիթենեաց, և պատուիրեաց նոցա մի մեկնել յԵրուսաղեմէ, այլ սպասել աւետեացն Հօր, զոր լուան ՚ի նմանէ: Եւ այս օրհնեալ՝ մեկնեցաւ ՚ի նոցանէ և վերացաւ յերկինս, և ամպ կալաւ զնա յաչաց նոցա: Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ երկինս եր-

թալոյ նորա. աՀաւասիկ արք երկու երեւեցան նոցա 'ի Հանդերձս սպիտակս և ասացին. արք Գալիլեացիք, զի՞ կայք Հայեցեալք ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ, զորօրինակ տեսիք զնա երթալ յերկինս: Նոքա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթու ճանապարՀի: Եւ իբրև մտին, ելին 'ի վերնատունն՝ ուր վանէին իսկ էին՝ Պետրոս և Յակոբոս, ՅովՀաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթուղիմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփեան, Շմաւոն նախանձայոյզ և Յուդա Յակոբեան: Սոքա ամենեքեան էին Հանապազորդեալ միաբան յաղօթս Հանդերձ կանամբք և Մարեմաւ մարբն Յիսուսի և եղբարբք նորա:

Վախճան առաջին մասին:

# ՍԽԱԼՄՈՒՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| եչ. | տող. | սխալ. | ուղիղ. |
| --- | --- | --- | --- |
| 7. | 5. | կոյսն՝ | Կոյսն |
| 8. | 7. | Ն.յս | չՆ.յս |
| 13. | 29. | 'ի ձկրտութիւն | 'ի մկրտութիւն՝ |
| 16. | 2. | Գուլէլլայցւոց. | Գուլէլէայցւոց. |
| — | 15. | գլխիդ. | գլխին |
| — | 17. | գլխին | գլխիդ |
| 22. | 5. | հողմայն | հողմոյն |
| 23. | 22. | ղէ | ղէ |
| 24. | 24. | փարիսեցւոյն. | փարէսեցւոյն՝ |
| 36. | 25. | կեր, | կե՛ր, |
| 71. | 5. | առ | էառ |
| — | — | էառ. | առ |

()

1480

149